


ՍՈՒՐԻՈՅ ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ ԹԻՐԱՆ ԴԱՐՉԱՆ ԹՐՔԱԿԱՆ ՕՂԱՅԻՆ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ



Շաբաթ, 19 Նոյեմբեր 2022-ի կես գիշերուան ժամը 00:00-ին, թրքական ուժերուն ենթակայ գինուորական օդանավեր Յալէպի, Յասիչէի եւ Ռաքքայի հիւսիսային եւ հիւսիսարեւելեան տարբեր շրջաններու, գիւղերու եւ քաղաքներու վրայ յարձակում գործեցին: Տեղական աղբիւրներ հաղորդեցին, որ թրքական օդանավերը թիրախ դարձուցին Յալէպի հիւսիսային արուարձանի «Մանկ», «Այն Տաքնա», «Այն Արապ», «Թալ Ռաֆաաթ», «Մարաանազ» գիւղերը, Ռաքքայի արուարձանի հիւսիսարեւելեան «Այն Իսա» ավանը, Յասիչէի հիւսիսարեւելեան «Մալքիե» արուարձանի «Քարաչոք» լեռան տարբեր շրջաններ, Յասիչէի հիւսիսարեւմտեան «Տրպեպիե» ավանի տարբեր շրջաններ, իրաքեան «Սուլէյմանիե» սահանգէն շրջաններ եւ Էրպիլ սահանգի «Սանքասար»-ի շրջանը:

Թրքական օդային յարձակումներուն հետեւանքով արձանագրուեցան գոհեր, վիրաւորներ եւ նիւթական ահաւոր վնասներ: Այս առիթով, տեղական աղբիւրներ հաղորդեցին Նաեւ, թէ Երկուշաբթի, 21 Նոյեմբերին, ռուսական պատերազմական օդանավեր մարակոծեցին թրքական սահմանային «Պապ ալ Յաուա», «Պապըքա» եւ «Սարմատա» շրջաններուն մէջ կայք հաստատած «Ճապիաթ ալ Նուսրա» գինեալ ահաբեկչական խմբաւորման ենթակայ, միջազգային ահաբեկչութեան ցուցակին մաս կազմող «Թահիրի ալ-Շամ» կոչուած խմբաւորումներու կեդրոնները: Յարձակումին հետեւանքով ահաբեկիչներուն շարքերը կրեցին մարդկային եւ նիւթական վնասներ: Միւս կողմէ, Թուրքիոյ Նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողան սպառնաց թրքական պատերազմական օդանավերու յարձակումներուն կողքին, Սուրիոյ եւ Իրաքի հիւսիսային շրջաններուն դէմ ռազմական գործողութիւններ սկսիլ:

«Ուաթան Անլայն»-ի համաձայն, Էրտողանի տոյն յայտարարութիւնը եկաւ թրքական-սուրիական սահմանային Այնթապ քաղաքին «Քարքամիշ» ավանին հրթիռակոծումէն եւ 3 մահուան պարագաներու արձանագրումէն ետք:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՈՒՐԱԿԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՐ ԼԱԹԱՔԻՈՅ Ս. ԱՍՏՈՒԱՍԱԾԻՆ ԵԿԵՂԵՅՈՅ ԱՆՈՒՄՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՈՒՍՏԱԳՆԱՉՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Շաբաթ, 19 Նոյեմբեր 2022-ի առաւօտուն, Բերիոյ Յայոց Թեմի Յայրապետական Նուիրակ Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան հովուական այցելութեամբ ժամանեց Լաթաքիա: Սրբագան Յօր կ'ընկերակցէին Քեսապի Յոգեւոր Տեսուչ Յոգշ. Ս. Անդրանիկ Վրդ. Քիրիլմեան, Յոգշ. Ս. Մանուկ Վրդ. Պարիխանեան, Արժ. Ս. Չարեհ Զինյ. Շաքարեան, Ազգ. Վարչութեան անդամ Գուրգէն Գալուստեան, Ազգ. Երեսփոխանական Ժողովի անդամ Պետրոս Յովհաննեսեան եւ հիւրաբար ժամանած Նազարեթ Տիշոյեան:

Սրբագան Յայրը ջերմապէս դիմաւորուեցաւ Լաթաքիոյ եւ Ծովափնեայ շրջանի Յոգեւոր Յովի Արժ. Ս. Վազգէն Զինյ. Քեօշկերեանի, Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ Թաղական Խորհուրդի անդամներուն, դպիր-դպրուհիներուն, ինչպէս նաեւ Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտութեան կողմէ: Եկեղեցւոյ մուտքին Սրբագան Յայրը օրինեց ավանդական աղն ու հացը, ապա մուտք գործեց եկեղեցի եւ գոհաբանական աղօթք մատուցեց:



Սարիւնա Պողիկեան
 Շաբ.՝ 19 16 >

ԿԻՐՈ ՄԱՆՈՅԵԱՆ «ՂԱՇՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ԵՒ ԱՐՇԵՍԱԿԱՆ ՄՕՏԵՅՈՒՄ Է ԱԶԳՆ ՈՒ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՐ ՀԱԿԱԴՐԵԼԸ, ԱՆԿԱՆ ԱՆԿԷ ԹԵ ԱՅՂ ՀԱԿԱԴՐՈՒԹԻՒՆԸ Ո՛Ր ԿՈՂՄԵՆ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ»

Ստորեւ կը ներկայացնենք ՅՅԴ Բիւրոյի անդամ Կիրո Մանոյեանի խօսքը Սուրիոյ Գամիշլի Նահանգին մէջ Երեքշաբթի, 22 Նոյեմբերին տեղի ունեցած ՅՅԴ 132-ամեակի պաշտօնական հանդիսութեան առիթով:

«Յայ Յեղափոխական Դաշնակցութեան Օրը տարեկան հաշուետուութեան օր է. հաշուետուութիւն՝ կատարածի, չկատարածի եւ կատարելիքի շուրջ: Յաշուետուութիւն՝ սեփական ժողովուրդին, որ Դաշնակցութեան նպատակներուն եւ միջոցներուն միակ աղբիւրն է:



Տարեկան հաշուետուութեան օրը չի կրնար շրջանցել կուսակցութեան անցած ամբողջ ուղին, մանաւանդ երբ այդ կուսակցութիւնը ունի 132-ամեայ պատմութիւն: Պատմութիւն՝ որ անբաժանելի մասն է սեփական ժողովուրդին եւ սեփական երկրին պատմութեան: Պատմութիւն՝ որ լեցուն է տասնեակ հազարաւոր նուիրեալներու անձնագոհութեան դրուագներով, քաղաքական ու քարոզչական նախաձեռնութիւններով:

132 տարի Դաշնակցութիւնը ոչ միայն եղած է հայ ժողովուրդին պատմութեան ամենակարեւոր դրուագներուն ակնաւորները, եղած է ոչ միայն մասնակիցը, այլ շատ անգամ՝ եղած է Նաեւ առաջնորդը, գաղափարական, մարտական, քաղաքական ճակատներու վրայ՝ առաջին դիրքերուն վրայ մարտնչողը: Դաշնակցութեան կատարած դերը ճիշդ գնահատելու համար բաւարար է Յայոց պատմութեան վերջին 132 տարիներուն մասին հարց տալ. ի՞նչ բաներ տարբեր պիտի ըլլային այդ պատմութեան մէջ, եթէ եղած չըլլար Յայ Յեղափոխական Դաշնակցութիւնը:

Յայութեան տնտեսական ու քաղաքական ազատութեան համար պայքարը Դաշնակցութիւնը տարաւ բոլոր ճակատներու վրայ, ընկերվարութիւնը որդեգրելով որպէս գաղափարախօսութիւն: Դեռ 1906-ի իր Կովկասեան գործունեութեան Նախագիծին մէջ, Դաշնակցութիւնը առանց սեռի խտրութեան՝ բոլոր կովկասցիներուն համար քուէարկութեան իրաւունք կը պահանջէր. կը պահանջէր օրական ութ ժամեայ աշխատանքի իրաւունք. կը պահանջէր անձի անձեռնմխելիութիւն: Իր այս բոլոր պահանջները իրականացնելու կարելիութիւն Դաշնակցութիւնը ունեցաւ, երբ ստանձնեց 28 Մայիսի 1918-ին հռչակուած Յայաստանի Յանրապետութեան դէպքը: Եւ Դաշնակցութիւնը սկսաւ մէկ ամ մէկ իրականացնել իր այդ պահանջները:

132-ամեայ Դաշնակցութեան մեծագոյն նուաճումներն մեկը, անառարկելիօրէն, հայոց պետականութեան վերականգնումին՝ Յայաստանի Յանրապետութեան հիմնադրութեան եւ կերտման մէջ իր ստանձնած առաջնորդող դերակատարութիւնն է: Անուրանալի փաստ է, որ եթէ 1918-ին չիմնադրուէր Յայաստանի Յանրապետութիւնը, մենք չէինք ունենար ո՛չ Խորհրդային Յայաստան եւ ոչ ալ՝ 1991-ին վերանկախացած Յայաստանի Յանրապետութիւն: Մենք երբեք չէնք յաւակնած, թէ մեր քայլերուն մէջ սխալներ չեն եղած: Բայց մենք ամենայն պատասխանատուութեամբ յայտարարած ենք ու կը յայտարարենք, որ անխարդախ է եղած Դաշնակցութեան

Շաբ.՝ 19 11 >

Խմբագրական

ՍՈՒՐԻՈՅ ՄԵՋ ՍՂԱԾԸ ԿԸ ԴԺՈՒԱՐԱՑՆԵ ԱՊՐՈՒՄՏԻ ԱՊԱՅՈՎՈՒՄԸ

Սուրիոյ մէջ վերջին շրջանին ուտեստեղէնի եւ ընդհանրապէս ապրուստի անհրաժեշտ կարիքներու գիներուն անհամեմատ բարձրացումը անել կացութեան մատնած է քաղաքացիները:

Պատերազմի դժուարագոյն պայմանները թօթափած Սուրիոյ բնակչութիւնը այս անգամ ամէն շաբաթ ականատեսը կ'ըլլայ գիներու նոր բարձրացումի, ինչ որ աղքատութեան մակարդակը կը բարձրացնէ եւ ապրուստի նուազագոյն պայմաններու ապահովումը դժուար կը դարձնէ:

Վերջին տնտեսական ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, որ սուրիացի ընտանիքի մը ապրուստի ամսական միջին արժեքը Սեպտեմբերի աւարտին կը հասնէր 3,5 միլիոն ս.ո.-ի: Նոյեմբերի մէջ յատկապէս ուտեստեղէնի գիները նոր մագլցում արձանագրեցին՝ աւելի բարդացնելով վիճակը:

Սղաճը ունի մեկէ աւելի պատճառներ, ինչպէս Սուրիոյ տընտեսական շրջափակումը, վառելանիւթի տագնապն ու համապատասխանաբար բարձրացող գինը, ներմուծումի մաքսային տուրքերու բարձրացումը, սուրիական դրամանիշին անկումը օտար դրամանիշերուն դիմաց: Այս բոլորին կողքին սակայն նկատելի է շուկաներու հսկողութեան թուլութիւնը եւ առեւտրականներու շահագործումը այս կացութեան: Այլապէս ինչպէ՞ս կրնան բարձրանալ վաճառականներուն նախապէս ապահոված տեղական մեծաքանակ մթերքներուն գիները, եթէ սուրիական դրամանիշը մեկ օրէն միւսը նոր անկում մը արձանագրէ օտար դրամանիշի բարձրացման հետ: Անտրամաբանական դարձած են սղաճի տոկոսները մանաւանդ տեղական արտադրութեան ուտեստեղէնի պարագային, որքան ալ որ այդ մէկը վերագրուի վառելանիւթի տագնապին ու էլեկտրականութեան հայթայթման նուազումին, հետեւաբար ալ արտադրողական աշխատանքի ծախսալից ըլլալուն:

Տնտեսական նման իրավիճակներու յաղթահարման մէջ նկատառելի դեր կ'ունենան տնտեսական փոքր ձեռնարկութիւնները, որոնք կրնան գէթ ընդունելի եկամուտ ապահովել առանց մեծ ձեռնարկութիւններու հսկայ ծախսերուն: Հետեւաբար այլընտրանքային լաւ լուծում կը համարուին նման ձեռնարկութիւնները յատկապէս երիտասարդութեան մօտ՝ դիմագրաւելու ներկայ անկայուն տնտեսական վիճակը:

Ցաւօք, ինչպէս Սուրիոյ պետական հաստատութիւններու, այնպէս ալ հայկական հաստատութիւններու պաշտօնէութեան ամսականներուն պատկերը անհամեմատելի կը մնայ ապրուստի անհրաժեշտ կարիքներու սղաճին հետ:

Պաշտօնեան ինչպէ՞ս պիտի գոյատեւէ նման պայմաններով, ինչպէ՞ս պիտի ապահովէ իր ընտանիքին ապրուստի նուազագոյն մակարդակը. հարցումներ են, որոնք ինչպէս պետական այնպէս ալ ազգային մարմինները պէտք է մղեն համապատասխան քայլերու ձեռնարկելով պաշտօնէութեան ամսականներու պատկերը սղաճին հետ համեմատելու եւ տրամաբանական լուծումներ որոնելու:

«Գ.»

-Պելոռուսէն Դամասկոսի Միջազգային Օդակայանի հասաւ Սուրիոյ ժողովուրդին ուղղուած մարդասիրական օժանդակութիւն: Օժանդակութիւնը կ'ընդգրկէր հանդերձ եւ բժշկական սարքաւորումներ:



-Պելոռուսի վարչապետ Ռոման Կոլով-չիլքոյի նախագահութեամբ տնտեսական պատուիրակութիւն մը Դամասկոսի Միջազգային օդակայան ժամանեց: Երկօրեայ այցելութիւնը ընդգրկեց սուրիացի քաղաքական գործիչներու հետ հանդիպումներ՝ երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւններու ամրապնդման օրակարգով:



-Սուրիոյ շուրջ Ասթանայի բանակցութեան 19-րդ ժողովին ռուսական պատուիրակութեան նախագահ Ալեքսանտր Լաւրենթեւ մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտնեց, որ սուրիական տարածքներու վրայ թրջական յարձակումները Միջին Արեւելքի իրավիճակին լարուածութիւնը կը սաստկացնեն, շեշտելով, որ անոնք տեղի ունեցան Ասթանայի բանակցութեան 19-րդ ժողովին զուգահեռ եւ բացասական ազդեցութիւն ունեցան անոր ընթացքին վրայ: Լաւրենթեւ հիւսիսային Սուրիոյ մէջ ԱՄՆ-ի դրսեւորումները «քանդիչ» համարեց, շեշտելով որ ԱՄՆ Սուրիոյ մէջ գինեալ ահաբեկչական խմբաւորումներու զինամթերք կը տրամադրէ եւ տարածաշրջանի խաղաղութիւնը կը վտանգէ:



-Սուրիոյ մէջ Ռուսիոյ նախագահի բանագնաց, Ասթանայի բանակցութիւններու ռուսական պատուիրակութեան նախագահ Ալեքսանտր Լաւրենթեւ հաստատեց, որ Սուրիա-Թուրքիա մերձեցումը կարեւոր գարգացում կրնայ ըլլալ: «Ռուսան Անլայն»-ի համաձայն, Լաւրենթեւ մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտնեց, որ Ռուսիոյ տուեալներուն համաձայն, Անգարա եւ Դամասկոս յարաբերութիւններու կարգաւորման պատրաստակամութիւն կը յայտնեն: Անոր համաձայն, Ռուսիա կոչ ուղղած է Թուրքիոյ՝ հիւսիսային Սուրիոյ մէջ գինուորական գործողութիւններ չսկսիլ, որովհետեւ նման քայլ դրական արդիւնք տալու փոխարէն ահաբեկչութիւնը առաջ պիտի մղէ:



-Հասիչէի արուարձանի «Եաարոպիէ» շրջանէն տեղական աղբիւրներ հաղորդեցին, որ ԱՄՆ-ի ուժեր 44 փոխադրակառքերով սուրիական ճեզրի շրջանէն թալանուած քարիւղ փոխադրեցին Իրաք, անցնելով «Մահմուտիէ» ապօրինի միջանցքէն:



Լուրեր Հայաշխարհին

ԱԻԵԻ ԲԱՆ ԵՐԲԵՔ ԱՆՀՐԱԾԵՑՑ Ե ԱԶԳԱՅԻՆ ՊԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՀԻՄՔԻ ՎՐԱՅ ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ԿՈՒՄԻՏԵԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԻՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ ՅԱԿՈՒՔ ԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ԱՐՏԱՍԱՆԱԾ ԽՕՍԵԸ՝ ՀՀ 132-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ

ՀՀ ԲԻՐՈՅԻ իր լրիվ կազմով, մեր ուղեկից միութիւններու կեդրոնա- կան վարչութիւնները եւ ՀՀ ԲԻՐՈՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԳՐԱՏԵՆԵԱԿԻ ԿԱ- տասխանատուները այս շաբթուան ընթացքին կը գտնուին Լիբանան, ոչ միայն մասնակցելու ժողովներու եւ հանդիպումներու, այլ նաեւ իրենց վըս- տահութեան քունքները եւ գնահատանքը յայտնելու լի- բանանահայութեան եւ Լիբա- նանի դաշնակցական ընտա- նիքին կարեւոր դերին՝ իբրեւ Սփիւռքի ճանաչող սիրտ եւ համահայկական դերակա- տարութեան ունեցող հնոց: Բազում դժուարութիւններ եւ տագնապներ տեսած այստե- ղի մեր հայրենակիցները



Photo Raffi

պիղծ մնացած են, այսօր եւս պատնէշի վրայ են եւ՝ իրենց ազգային պար- տականութիւններուն գիտակից:

Այս օրերուն Լիբանան ժամանած հայրենի եւ սփիւռքի ներկայացու- ցիչներէն շատերու պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը թրծուած են այստեղ. ինչ որ հայրենասիրութեամբ տոգորուած է իրենց սիրտը եւ հայ գիտելիքներով ու արժէքներով յղկուած է իրենց միտքը: Միջինարեւել- եան մեր համայնքներու հայաբոյր մթնոլորտը, հայ տան տաքուկ բոյնի կողքին՝ դարձ-ակումբ-եկեղեցի երրորդութեան ջամբած հայրենիքի սերն ու կամաւոր ազգային ծառայութեան սկզբունքը համակած էին բոլորս:

Սիրելիներ,

ՀՀ օրուան հիմնական նպատակները հայութեան եւ հայրենիքի իրա- վիճակի վերլուծումն է եւ Դաշնակցութեան հաշուետուութիւնը՝ իր ժողո- վուրդին:

1980-ական թուականներու վերջերէն մինչեւ 2020-ի Սեպտեմբեր մենք ունեցանք անխոցելիութեան զգացում, որովհետեւ յաղթանակած ժողովուրդ էինք: Արցախը ազատագրուած էր, Հայաստանը՝ վերանկայացած, Ջա- Լախը՝ աշխուժացած, Արեւմտեան Հայաստանի մէջ՝ գարթոնքի ծիլեր ար- ծակուած, եւ Սփիւռքը՝ նուաճած Հայ դատի կարեւոր ձեռքբերումներ հա- մաշխարհային մակարդակով: Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնու- թիւնը ամրապնդուած էր եւ ազգային օրակարգի հիմնական կետերու շուրջ այլ համախոհութիւն ստեղծուած էր, մասնաւոր 2015-ի հարիւրամեակի հա- մախմբող մթնոլորտէն ետք:

Բնականաբար, ՀՀ-ն իր առիծի բաժինը բերած էր այդ ձեռքբերում- ներու իրականացման մէջ՝ ի գին մեծ գոհողութեանց. հազարաւոր նահա- տակներու արեամբ նուիրականացած յաղթանակները, քաղաքական մեծ աշխատանքը, քարոզչական համադրուած արշաւները եւ հայրենիքի ու Սփիւռքի տագնապահար շրջաններուն ուղղուած հսկայածաւալ օժանդա- կութիւնները տուած էին ակնկալուած արդիւնքը, եւ կար համատարած լա- ւատեսութիւն: Համոզումի էր վերածուած նաեւ մեր այն կարգախօսը, որ յանձնառու Սփիւռքը լաւագոյն գրաւականն է հզօր հայրենիքին:

Ամրապնդուած էին մեր ազգային արժանապատուութիւնը եւ ազգա- յին իրձերու հանդէպ մեր հաւատքը. ստեղծուած էր աննախընթաց համա- հայկական միասնականութիւն՝ ի սպաս մեր հայրենիքին ու իտեալներուն, իսկ ներագոյնի տարակարծութիւններն ու Հայաստանի իշխանութիւններ

Շար.՝ 19 4

ԱՐՅԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. «ՊԱՔՈՒԻ ՀԵՏ ՈՐԵԷ ԲՆՆԱՐԿՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՄԻԱՅՆ ԱՅՆ ՊԱՐԱԳԱՅԻՆ, ԵՐԷ ԸՆԹԱՆԱՅ ԿՈՂՄԵՐՈՒ ԻՐԱԽԱՀԱՄԱՐՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄՈՎ»

Արցախի Հանրապետութեան համար անընդունելի են Ատրպէյճա- նի փորձերը՝ չեղեալ յայտարարելու Արցախի՝ իբրեւ տագնապի կողմի կարգավիճակը, իսկ բանակցութիւնները ներկայացնել իբրեւ «խօսակ- ցութիւն Ղարաբաղի մէջ ապրող հայերու հետ» եւ Ատրպէյճանի ներ- քին քաղաքականութեան շրջանակներուն մէջ ինկած գործընթաց, յայ- տարարած է Արցախի Արտաքին Գործոց Նախարարութիւնը:

«Ատրպէյճանա-ղարաբաղեան տագնապի լուծման անհրաժեշտ եւ առանցքային բաղադրիչներն են բանակցային լիարժեք ձեւաչափը եւ այդ շրջանակներուն մէջ ընթացող քննարկումներն ու հանդիպում- ները:



Այդ պարունակին մէջ կարեւոր կը նկատենք ընդգծել, որ Արցախի Հան- րապետութեան համար անընդունելի են Ատրպէյճանի փորձերը չեղեալ նկա- տելու Արցախի՝ իբրեւ տագնապի կող- մի կարգավիճակը, իսկ բանակցու- թիւնները ներկայացնել իբրեւ «խօսակ- ցութիւն Ղարաբաղի մէջ ապրող հայերու հետ» եւ Ատրպէյճանի ներ- քին քաղաքականութեան շրջանակներուն մէջ ինկած գործընթաց:

Արցախի ժողովուրդը քանի մը անգամ արտայայտած է իր դիրք- դրոշումը սեփական ապագայի վերաբերեալ, որ վերահաստատուած է 30 Հոկտեմբերին Ստեփանակերտի մէջ տեղի ունեցած բազմախաղա- րոնց հանրահաւաքով:

Արցախի Հանրապետութեան Արտաքին Գործոց Նախարարու- թիւնը բազմիցս ընդգծած է բանակցութիւններուն Արցախի լիիրաւ մաս- նակցութեան անհրաժեշտութիւնը եւ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի ձեւա- չափի՝ իբրեւ ատրպէյճանա-ղարաբաղեան տագնապի խաղաղ լուծ- ման համար լաւագոյն հարթակի պահպանման կարեւորութիւնը: Մեր տուեալ դիրքորոշումը կը մնայ անփոփոխ:

Միեւնոյն ժամանակ, Արցախի Հանրապետութիւնը չի հրաժարիր պաշտօնական Պաքուի հետ երկկողմանի յարաբերութիւններուն եւ տագնապի լուծման առնչուող հարցերու քննարկումէն: Սակայն ան- հրաժեշտ կը նկատենք շեշտել, որ որեւէ քննարկում ընդունելի պիտի ըլլայ միայն այն պարագային, եթէ ընթանայ միջազգայնօրէն համա- ձայնեցուած ձեւաչափով եւ կողմերու իրաւահաստատութեան սկզբուն- քի պահպանումով», նշուած է Արցախի արտաքին գործոց նախարա- րութեան յայտարարութեան մէջ:

ՀՀ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ԱՄՓՈՓԵՅ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ՀՀ ԲԻՐՈՅԻ իրաւերով 17-18 Նոյեմբեր 2022-ին Լիբանանի մէջ տեղի ունե- ցաւ ՀՀ մարմիններու ներկայացուցիչներու խորհրդաժողովը:

Ժողովին ներկայացուցեցան Հայաստանի Հանրապետութեան, Արցախի եւ սփիւռքեան կազմակերպական շրջաններու քաղաքական, կազմակերպական, քարոզչական, Հայ դատի, երիտասարդական միաւորներու եւ մեր ուղեկից միու- թիւններու վերջին շրջանին ծաւալած գործունեութեան մասին գեկուցումներ:



Photo by Marika

Չեկուցումներու լոյսին տակ խորհրդաժողովը քննեց Դաշնակցութեան դի- մակայած խնդիրները թե՛ ներքաղաքական եւ թե՛ արտաքին մակարդակներու վրայ, արձանագրելով, որ մեր երկրի իշխանութիւններուն վարած քաղաքակա- նութեան պատճառով ստեղծուած այսօրուան ծանր վիճակը յաղթահարելու հա- մար հրամայական է վարչակարգի ամբողջական փոփոխութիւնը:

Խորհրդաժողովը ընդգծեց Արցախի վերջին գնալուծային հանրահաւա- քի լոյսին տակ եւ անոր օրինակով, միակողմանի պարտադրուող ծրագիրները մերժելու համաժողովրդային շարժումի ծաւալման անհրաժեշտութիւնը:

ՀՀ մարմիններու ներկայացուցիչները քննարկեցին նաեւ աշխարհաքա- ղաքական այսօրուան պայմաններն ու միտումները եւ անոնց լոյսին տակ տա- րուող Հայ դատի աշխատանքները: Յատուկ օրակարգով շեշտուեցաւ նաեւ Սփիւռքի ներուժը հայրենասուեր ծրագիրներու իրագործման համար լիարժեք օգտագործելու եւ Սփիւռքի տագնապահար գաղութներուն նեցուկ ու զօրավիգ կանգնելու հրամայականը:

Ամփոփելով իր աշխատանքները՝ ՀՀ մարմիններու խորհրդաժողովը ար- ձանագրեց նշուած առաջնահերթութիւններու ընդառաջ ցանցային եւ համա- կարգուած աշխատանքներուն վերանորոգ թափ հաղորդելու հրամայականը:

ԱՒԵՆԻ ՔԱՆ ԵՐԲԵՔ...

Սկիզբ՝ էջ 3

րու բազմապիսի խարխափումները մանր անախորժություններ եւ սրբագրելի վրիպումներ կը թուէին ըլլալ մեծ պատկերին մէջ: Աղետներու ու կորուստներու հարիւրամեակէ ետք, պայծառ դարաշրջան մը բացուած էր հայութեան առջեւ:

Գիտէք արդէն, որ պատերազմի ընթացքին, ամեն տարակարծութիւն մէկդի դրած, ԶՅԴ-ն նուիրուած էր հայութեան յաղթանակը ապահովելու գործին՝ չորս ուղղութիւններով - հայրենիքի պաշտպանութեան համար տրամադրելով մարդուժ կամաւորական պահեստագործի ճամբով, ստեղծելով քաղաքական համաշխարհային զօրաշարժ ամենուրեք ձեռնարկելով քարոզչական պատերազմի եւ մասնակցելով գոյացնելու անախընթաց նիւթական կռուաններ, որոնք տրամադրուեցան հայրենիքին:

Ուստի հասկնալի էր, որ ազգովին ապրեցանք ահաւոր ցնցում, երբ 2020-ի աշնան Արցախեան երկրորդ պատերազմին կրած պարտութիւնը ի յայտ եկաւ եւ խորտակեց անախորտելիութեան ու անխոցելիութեան հանգանակը: Հիասթափութիւնը ճնշող էր, մասնաւորապէս յաղթանակի կեղծ տպաւորութիւններ ստեղծած իշխանութիւններու շղարշը պատռեցաւ, եւ մեր կորուստներու իսկական տարողութիւնը պարզուեցաւ: 2020-ի նոյեմբեր 9-ին:

Ազգային նսեմացումի առաջնորդած Հայաստանի ղեկավարը մերժեց ընդունիլ Արցախն ու Հայաստանը աղետի առաջնորդած ըլլալու հանգամանքը, վճռեց ամեն գնով կամչիլ իր իշխանութեան աթոռին եւ սատարեց հայրենիքը նսեմացնող պարտուողական պայմաններու կատարումին:

Այս մեծագոյն աղետին առթած համատարած յուսահատութեան եւ ընկճուածութիւնը յառաջացուց նոյնիսկ խզում հայրենիքի եւ Սփիւռքի միջեւ: Հայրենիքի փրկութեան շարժումը զօրաշարժի ենթարկեց հայրենի ժողովուրդին կարելորդ գանգուածը, փորձեց վերականգնել ազգային գաղափարախօսութեան հիմքերու վրայ գործող պետութիւնը, բայց իշխանութիւնը ամեն ճիգ թափեց ապակողմնորոշելու եւ շարունակաբար պառակտելու հայրենի ժողովուրդը ու յաջողեցաւ վերարտադրել ինքզինքը: Ստեղծուեցաւ քաղաքական հալածանքներու մթնոլորտ: ցուցարարներու անտեղի մեղադրանքներով մեծաթիւ քաղաքական բանտարկեալներ այսօր ազատագրուած են կամ ալ՝ կեղծ դատերու ենթակայ:

ՀՅԴ-ն եւ իր գործընկերները շարունակեցին ժողովրդային պայքարը, բայց ժողովրդային հաւաքները չհասան այն թիւերուն, որպէսզի խարխիլին այս իշխանութեան հիմքերը: Այժմ առաւել ներկայ ըլլալով Ազգային ժողովին մէջ, մենք օգտագործելու ենք խորհրդարանի ազդեցիկ հարթակը մեր կեցուածքները ներկայացնելու եւ փորձելու կանխել միակողմանի նորաւոր գիշումներ, միաժամանակ չհրաժարելով ժողովրդային պայքարի հնարաւորութենէն:

«Բաժնէ որ տիրես»-ի քաղաքականութիւնը որդեգրած Հայաստանի իշխանութիւնը այսօր Սփիւռքն ալ պառակտելու սեւ գործին է լծուած: Մինչդէռ, թշնամիներով շրջապատուած եւ մեծ հարուած ստացած մեր հայրենիքին համար աւելի քան երբեք անհրաժեշտ է ազգային գաղափարախօսութեան հիմքի վրայ համահայկական կուռ միասնականութիւն:

Այսօր դեմ յանդիման կը գտնուինք նորագոյն մարտահրաւերներու, որովհետեւ պարտուած ու հայկականութենէ պարպուած Հայաստանի իշխանութիւնները հայրենի շահերը պաշտպանելու իրենց անկարողութիւնը բազմիցս փաստած են, շարունակական նահանջի մէջ են եւ ամեն տեսակի զիջումներով՝ պատրաստ: Մարտահրաւերներ ունինք նաեւ Սփիւռքի պարագային, ուր արդէն գործող կառոյցներու թարմացման, առաւել աշխուժացման եւ աշխատելաճի արդիականացման կարիքները դարձած են հրամայական:

Մեր հայրենիքին առջեւ ցցուող զխաւոր մարտահրաւերները եւ ՀՅԴ-ի դիրքորոշումները հինգ մասերու կարելի է բաժնել:

Ա) Արցախ

Արցախահայութիւնը վիրաւոր է այսօր, սակայն իր վերքերը ամոքելու, հայկական դիմագիծը պահպանելու, անվտանգութիւնը ապահովելու, Արցախի հանրապետութիւնը լիովին վերականգնելու եւ անկախութիւնը պահպանելու գործին է լծուած: Արցախը յստակօրէն բանաձեւած եւ հրապարակած է իր կամքը՝ վճռականօրէն բացառելով Ատրպէյճանի գերիշխանութեան տակ ըլլալու որեւէ տարբերակ: Իսկ Հայաստանի իշխանութիւնները կը փորձեն հեռաւորութիւն պահել Արցախէն, նոյնիսկ իրենց «ձեռքերը լուալ»՝ խուսափելով անոր անվտանգութիւնը եւ զարգացումը ապահովելու կենսական պարտքէն:

Մեր դիրքորոշումը յստակ է. Արցախի հանրապետութիւնը լրիւ վերականգնելու է եւ վերագտնելու իր նախկին աշխուժութիւնը: Արցախի անկախութիւնը անսակարկելի է. աշխատելու ենք, որ աշխարհով մէկ շեշտաւորուի անոր ինքնորոշման միջազգային իրաւունքը: շարունակելու ենք խթանել, որ ազգովին նեցուկ կանգնինք անոր՝ քաղաքականօրէն, տնտեսականօրէն, ընկերային ծրագիրներու ճամբով, եւ ապահովենք համազգային հոգածութիւն անոր անվտանգութեան, զարգացման եւ իրաւունքներուն սատարելու առումով:

Մէկ խօսքով, վստահ ենք, որ ոչ միայն պիտի վերականգնի Արցախը, այլեւ պիտի ծաղկի, հզօրանայ եւ վերջի վերջոյ պիտի միանայ մայր հայրենիքին:

Բ) Սահմանազատման ու սահմանազծման գործընթաց

Բազմիցս յայտարարած ենք, որ Հայաստանի իշխանութիւնները մեծ զգուշաւորութեամբ պարտին մօտենալ այս հարցին: Իրենց հոգեբանական ներկայ դրուածքով եւ միակողմանի զիջումներու ատակ այս իշխանութիւնները պարտին գտնել կամքը արմատականօրէն պաշտպանելու Հայաստա-

նի սահմաններն ու հողային ամբողջականութիւնը: Առաւել՝ Հայաստանի գերիշխանութենէն ոչ մէկ զիջում ընդունելի է այսպէս կոչուած «Չանգեզուրեան միջանցք»-ի հաստատման մեր թշնամիներուն պահանջներուն առընչութեամբ:

Գ) Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու կօնի եւ խաղաղութեան կեղծ օրակարգ

Անխոհեմ քայլ էր Հայաստանի վարչապետին Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու բնականոնացման բանակցութեան յաւելեալ ճակատ բանալը այս տագնապալի օրերուն, երբ առկայ են Հայաստանի անվտանգութեան խնդիրը, Ատրպէյճանի հետ բանակցութիւններու անլոյծ թնճուկը: այս բոլորը կը կատարուին քարոզելով տարածաշրջանին մէջ խաղաղութիւն հաստատելու կեղծ օրակարգը, հակառակ անոր որ անկայտ է, թէ հայութեան թշնամիները իրենց արիւնարբու նկրտումներէն եւ Հայաստանի իսկ հանդէպ յատուկ ախորժակներ դրսեւորելու վարքագիծէն չեն հրաժարած: Հայաստան-Թուրքիա սահմանը Թուրքիան է փակած եւ կարող է բանալ առանց որեւէ նախապայմանի: Հայաստանի կողմէ որեւէ զիջում կամ նախապայման ընդունելի չէ: Իրողութիւնը սակայն այլ է. Թուրքիան բազմաթիւ նախապայմաններ արդէն առաջադրած է եւ Հայաստանի իր յարաբերութիւնները կը պայմանաւորէ Ատրպէյճանի պահանջներու բաւարարումով: Յամենայն դէպս, Հայաստանը պետք է այժմէն պատրաստէ անհրաժեշտ օրէնսդրական դաշտը, առաջըն առնելու համար թրջական հաւանական ներխուժումին, եթէ օր մը սահմանները բացուին:

Դ) Թրջական եւ ատրպէյճանական հակահայ գրոհ

Թուրքիա եւ Ատրպէյճան այժմ իրենց ախորժակները սրած են Հայաստանի նկատմամբ եւ միաժամանակ ծրագրուած, համադրուած հակահայ քարոզչական եւ ցուցական արշաւի են դիմած աշխարհասփիւռ հայութեան դէմ: Հայաստանը անվտանգութեան լուրջ խնդիր ունի, թիրախ է Հայաստանի գերիշխանութիւնը, Սփիւռքի նկատմամբ կայ անմիջական սպառնալիք, եւ մեր թշնամիները վճռած են հայը դարձնել անհայրենիք:

Ե) Ազգային արժէքներ

Հայաստանի իշխանութիւնները հարուածի տակ առած են ազգային արժէքները, ազգ-բանակ հասկացողութիւնը եւ հայեցի դաստիարակչութիւնը: Ազգային գաղափարախօսութենէն հեռացնելով փորձ կը կատարուի անգոյն ու անձեւ գանգուածի վերածելու հայրենի նոր սերունդը: Ամեն գնով պայքարելու ենք այս ապագային ծրագիրներուն դէմ:

Հայրենի մարտահրաւերներուն կողքին, Սփիւռքն ալ ունի իր իւրայատուկ կարիքները: Իբրեւ համահայկական կազմակերպութիւն, ՀՅԴ-ին համար էական է նաեւ ունենալ կենսունակ, յանձնառու, նպատակասլաց եւ հայկականութեամբ տրոփող կազմակերպ Սփիւռք: անհրաժեշտ է յաւելեալ թափ եւ միջոցներ հայթայթել Հայ Դատի մեր ցանցի արդէն իսկ խիստ արդիւնաւետ աշխատանքներուն:

ՀՅԴ-ի մեծ ընտանիքը, իր երիտասարդական եւ ուսանողական միութիւններով, ուղեկից կազմակերպութիւններով, Հայ Դատի յանձնախումբերով ու գրասենեակներով, ինչպէս նաեւ՝ Դաշնակցութեան քարոզչական, տնտեսական, վերլուծական գրասենեակներով պատնէշի վրայ է ապահովելու հայկական միասնութիւն՝ ի սպաս հայրենիքի ու հայութեան:

Այսօր Սփիւռքը մէկ մարդու նման պարտի փարիլ հայրենիքի պաշտպանութեան տուրք գործին, անխնայ պայքարիլ թրջատրպէյճանական հայատեաց փանթօրանական ճակատին դէմ: Եւ անհրաժեշտ է փակել այն խրամատը, որ բացուած է հայրենիքի ու Սփիւռքի միջեւ:

Սիրելի՛ հայրենակիցներ,

Այսօր հայրենիքի եւ Սփիւռքի ազգային գաղափարախօսութեամբ համակուած ուժերը վճռական են պաշտպանելու հայրենի պետութիւնները, ազգային արժէքները եւ համազգային շահերը: Համոզուած ենք, որ 2020-ի պարտութիւնը լոկ ճակատամարտի կորուստ է եւ ոչ՝ պատերազմի ակարտ: Ազգային ազատագրական պայքարը կը շարունակուի: Ժամանակաւոր պարտութիւններու էջը փակած ենք եւ վերանորոգ թափով շարունակելու ենք ազգային ազատագրական պայքարը մինչեւ յաղթանակ:

Այդ յաղթանակները ուշանալու չեն, որովհետեւ մենք եւ հայ ժողովուրդը առհասարակ ունինք կամքը, ներուժը եւ պատրաստակամութիւնը կերտելու ազգային միասնականութիւն եւ իրականացնելու Դանիէլ Վարուժանեան հաւատամբը՝

**«Ոհ, այն ատեն, այս օրուան
Մեր մեռելները բոլոր
Միահամուռ ոստումով
Պիտի կանգնին գերեզմանին մէջ իրենց,
Ու անհամբեր հեռո՛ւն, հեռո՛ւն ակնապիշ
Պիտի սպասեն վարդահեղեղ գալուստին
Արշալոյսի մ' Արշալոյսի մը՝ որուն
(Հաւատացեք ինձ Մայրեր),
Ես ոտնաձայնը կ' առնեմ...»**

18 Նոյեմբեր 2022
Պէրոյթ

www.kantsasar.com
www.kantsasar.com

ՆԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովը իր 171-րդ նիստը գումարեց՝ 17-18 Նոյեմբեր 2022-ին, Հայլէպի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ ներքնասրահը, Նախագահութեամբ՝ Բերիոյ Հայոց Թեմի Հայրապետական Նուիրակ Գերաշնորհ Ս. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, ներկայութեամբ՝ Հայլէպի Զահանայից Դատուն, ազգ. Երեսփոխաններու, Ազգ. Վարչութեան եւ Ազգ. Կրօնական Ժողովի անդամներուն:

Ժողովը ընթացք առաւ Հայրապետական Նուիրակ Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի աղօթքով եւ բացման խօսքով: Ան ի սրտէ փառք տուաւ ու գոհութիւն յայտնեց Ամենակալ Աստուծոյ, որ Ժողովականները համախմբեց Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Երեսփոխանական 171-րդ նիստը գումարելու:



Սրբազան Հայրը ողջունելով ներկաները, ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին օրհնութիւնները փոխանցեց անոնց: Ան գնահատելով Ժողովականները, անոնց ազգանուէր ծառայութիւնը համարեց կամաւոր Նուիրում, երբ կը կատարուի անձնուիրաբար, գոհողութեամբ, սիրով ու անշահախնդիր կերպով: Սրբազան Հայրը իր խօսքը հաստատեց Աստուածաշնչական հետեւեալ համարով. «Ամուր եւ հաստատուն մնացէ՛ք, միշտ աւելիով աշխատեցէ՛ք Տիրոջ գործին համար, գիտնալով, որ ձեր յոգնութիւնը առանց վարձատրութեան չի մնար Աստուծոյ առջեւ» (Ա. Կր 15.58): Մակար Սրբազան մաղթեց, որ Ժողովը յաջող ընթացք ունենայ եւ թափանցիկ մօտեցումով քննարկէ օրակարգային կէտերը:

Ազգ. Երեսփոխանական Ժողովի ատենապետ, պետական երեսփոխան Ժիրայր Ռէիսեան հրաւիրեց կազմի ատենադպրուի Մակի Պերպերեանը, որ իր կարգին ընթերցեց ճեգիրէի Ազգ. Երեսփոխանական լրացուցիչ ընտրութիւններու տեղեկագիրը, ապա Ժողովի հրաւիրեց ճեգիրէի Նորընտիր Ազգ. Երեսփոխան բժշկ. Անդրանիկ Սարգիսեանը:

Ապա, Ազգ. Կրօնական Ժողովի հնգամեայ ամփոփ տեղեկագիրը ընթերցեց Առաջնորդական Տեղապահ Զոգշ. Ս. Մանուկ Վրդ. Պարիխանեան, իսկ երկրջ. Մարալ Գալայճեան-Սեմերճեան ընթերցեց Ազգային Վարչութեան հնգամեայ ամփոփ տեղեկագիրը, հանգամանօրէն ներկայացնելով Ազգ. Վարչութեան հնգամեայ լայնածաւալ գործունէութիւնը:

Տեղեկագիրներու ընթերցումէն ետք Ժողովականները լուսաբանական հարցումներ ուղղեցին, համապատասխան գեկոյցներ ստացան եւ թեմի գործունէութիւնը հարստացնող շինիչ առաջարկներ ներկայացուցին:

Այնուհետեւ, մեթո Սունապուլ Սունապուլեանի եւ Սիլվա Ճապաղուրեանի կողմէ ընթերցուեցաւ Բերիոյ Հայոց Թեմի վերամշակուած ներքին կանոնադրութիւնը: Ժողովը յարմարագոյն բանաձեւումները որդեգրելով վերամշակուած ներքին կանոնադրութեան թղթածրարը պիտի ներկայացնէ Ազգ. Ընդհ. Ժողովին՝ առ ի վաւերացում:


Ժողովը միաձայնութեամբ ընտրեց Ազգային Ընդհանուր Ժողովին իրենց մասնակցութիւնը բերող Թեմի հետեւեալ պատգամաւորներն ու փոխպատգամաւորները.

- Հայկազ Ասատուրեան
- Ժիրայր Ռէիսեան
- Վրէժ Եագուպեան
- Մեթո Սունապուլ Սունապուլեան
- Յարութիւն Հայրապետեան
- Բժշկ. Ռուբէն Գեորգեան
- Դոկտ. Զուրի Ազեգեան
- Աւօ Կարպուշեան
- Նշան Լևոնեան
- Խաչիկ Մելքոնեան
- Փոխպատգամաւորներ՝
- Մեթո Նորա Գրաճեան
- Յովսէփ Գասապեան

Սրբազան Հայրը փակման խօսքին մէջ, փառք տուաւ Ամենակալին եւ իր գնահատանքը յայտնեց Ժողովականներուն, որոնք բարձր համագործակցութեան ոգիով Ժողովին հեգասահ ընթացք տուին: Ան շնորհաւորեց

Դիմատետրէն եւ ուշացումով տեղեկացայ Պատանիի օրուան յիշատակման մասին: Ուստի զիս կազմաւորած այս միութեան կը նուիրեմ տողերս երախտագիտութեամբ ու զօրակցութեամբ անսահման:

ՄԻՊՈՒԹԻՒՆ ՊԱՏԱՆԵԿԱՆ



Գրիգոր Տունկեան

Ծրագիրներով դաստիարակչական, Կրթարան եւ գաղափարական, Պատանի հոգիներ քեզմով կը մեծան, կը Հասնին Երիտասարդական, Ազատ, Անկախ, Միացեալ Հայաստանի եւ հայութեան, Վե՛հ իտեալի հաւատաւոր կրողը կը դառնան:



Հայ ինքնութեան պահպանման, Առաքելութիւնն եւ Նուիրական, ՀՅԴ Պատանեկան, Հայրենիքի եւ ազգի անմնացորդ ծառայութեան սկզբնարան, Շառաւիղն եւ պահանջատեր հայութեան, Երթո՛ւ մնայ անխափան:

ԱՌՑԱՆՑ...

Սկիզբ՝ էջ 6

մատուցման զանազան միջոցներով, որպէսզի մանուկ թէ պատանի հայ ընթերցողը իր Նախասիրութեան համեմատ, ընտրանքի առիթ ունենայ կարդալու, խաղալու կամ պրպտելով սորվելու: Որքա՛ն ցան-

կալի է, որ հայ ազգի հարուստ անհատներ ու կազմակերպութիւններ քարակերտումէ աւելի հետաքրքրուին մարդակերտումով եւ յաւելեալ պիտո՞ճ տրամադրեն ֆինանսաւորելու ծրագիրներ, որոնք կ'օգնեն, որ հայ Նոր սերունդը հայօրէն ծաղկի եւ Սփիւռքի ծուլարանին մէջ պահէ իր մայրենի լեզուն ու մշակոյթը:

Ազգ. Երեսփոխանական Ժողովը, Ազգ. Վարչութիւնն ու Ազգ. Կրօնական Ժողովը, Ներքին Կանոնադրութեան Վերամշակման յանձնախումբը, ինչպէս նաեւ Ժողովին ընտրուած պատգամաւորներն ու փոխպատգամաւորները, որոնք լաւագոյնս պիտի ներկայացնեն Բերիոյ Հայոց Թեմը՝ Ազգ. Ընդհանուր Ժողովին:

Սրբազան Հայրը յուսադրեց Ժողովականները եւ մաղթեց, որ ներկայ մարտահրաւերներուն եւ դժուարութիւններուն դիմաց հաւատքի զօրութեամբ եւ գործակցութեամբ իրենց հայեացքը ուղղեն դէպի առաջ, միասնական աշխատանքով շարունակելու մեր ուսերուն դրուած քաղցր լուծը:

Մակար Սրբազան խնդրեց Աստուծմէ, որ խաղաղութիւն պարգեւէ աշխարհին, յատկապէս մեր հայրենիքներուն՝ Հայաստանին ու Արցախին եւ ծննդավայրին՝ Սուրիոյ: Ան քաջամտութիւնն ու բարօր տարիներ մաղթեց Սուրիոյ վստմաշուք Նախագահ տոքթ. Պաշշար ալ-Ասատին, քաջարի բանակին եւ պետական կառավարական աւագանիին:

Մակար Սրբազան հաստատեց, թէ Բերիոյ Հայոց Թեմը կը շարունակէ մնալ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան անբաժան մէկ մասնիկը եւ պատմական թեմը: Ան որդիական գագումներով շնորհակալութիւն յայտնեց ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ հայրապետին՝ իր ցուցաբերած հայրապետական հոգատարութեան համար եւ քաջամտութիւնն ու արեւշատութիւն մաղթեց Նորին Սրբութեան, որպէսզի Աստուծոյ շնորհքով եւ զօրութեամբ Հայ Եկեղեցին առաջնորդէ դէպի խաղաղ Նաւահանգիստ:

Ժողովը վերջ գտաւ Սրբազան Հօր «Պահպանիչ» աղօթքով:

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ ԱԶԳ. ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՀԱԼԷՊ, 17-18 Նոյեմբեր 2022

ԱՌՑԱՆՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՅԱԲԵՆՈՒԹՆԵՐ ԵՒ ԿԱՅՔԵՐ

Վերջին և Կարո Աբրահամյան

Յաճախ կը լսենք ու կը կարդանք, թե որքան կարևոր է մանկապատանեկան գրականությունը հայ նոր սերունդի հայեցի դաստիարակության համար: Դժբախտաբար սակայն անբավարար են այդ մարզին մեջ աշխատանքի նախաձեռնողները, եւ հազուադեպ մասնագետները: Պատճառը, կ'անգիտանանք, բայց կը հաւատանք, որ եթէ ընթերցասեր սերունդ մը կ'ուզենք պատրաստել, պէտք է փոքր տարիքէն մանուկները վարժեցնենք ընթերցելու՝ անոնց տրամադրելի դարձնելով բազմաբնույթ գրականութիւն, դաստիարակչական խաղեր, տպագրուած կամ առցանց միջոցներով:

Այս յօդուածով պիտի փորձենք անդրադառնալ վերջին 10 տարիներուն պատրաստուած մանկական եւ մանկապատանեկան գանձան առցանց յաւելուածներուն եւ կայքերուն: Համացանցի մեր դարուն, երբ տպագիր թերթեր կը դադրին՝ իրենց տեղը զիջելով առցանց տարբերակներու, մանուկներու եւ պատանիներու ուղղուած նախաձեռնութիւններուն մեծ մասը բնականաբար կը ստեղծուին առցանց գործածութեան համար՝ բջջային հեռախօսներու յաւելուածներու եւ կայքերու միջոցով:

Այսու, կը փափաքենք նշել արեւմտահայերէնով պատրաստուած հետեւեալ յաւելուածներն ու կայքերը.

Յաւելուածներ (applications)

- World of colors - Գոյներու Աշխարհ PTIT - ՓԹԻԹ
- World of shapes - Ձեւերու Աշխարհ Gus On the Go
- World of letters - Գիրերու Աշխարհ
- World of numbers - Թիւերու Աշխարհ

Կայքեր (websites)

- www.pokrig.org
- www.armlands.com
- www.teaov.org ԺՊԻՏ պարբերաթերթի PDF
- www.lalanouaran.com/hy
- www.soundcloud.com/a-sarkissian
- www.aghvorpaner.com
- www.e-ptit.com



Վերոյիշեալներուն կողքին Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքի (ԳԿՀՀԲ) հովանաւորութեամբ՝ youtube-ի վրայ ստեղծուած է Երկրի տեսերիզներու շարքը, թէ՛ մանուկներուն «Ակուլ Տուկուլ» եւ թէ՛ պատանիներուն «Ալնիս Բալնիս» համար: Նաեւ ԳԿՀՀԲ-ի հովանաւորութեամբ ստեղծուած է «Գիւտ մը Նիւթ մը» գիտական տեսերիզներու շարքը: Youtube-ի վրայ կարելի է գտնել նաեւ մանուկներու համար բազմաթիւ տեսերիզներ եւ հեքիաթներ, որոնց մասին ամբողջական տեղեկութիւն եւ այլազան աղբիւրներ կարելի է քաղել ԳԿՀՀԲ-ի Չնտուկ (www.zndooq.com) եւ ՀԲԸՄ-ի Ատլաս (www.agbuatlas.org.wa) տեղեկատու կայքերէն:

Տեղին է նշել, որ ԳԿՀՀԲ-ի պատասխանատուները արեւմտահայերէնի պաշտպանութեան եւ գոյատեւումին ի խնդիր իրենց այլազան ծրագիրներուն մէջ մեծ կարեւորութիւն կ'ընծայեն ժամանակակից մանկապատանեկան գրականութեան ծանօթ գիրքերու թարգմանութեան ու արեւմտահայերէն լեզուով հրատարակութեան: Այս ծիրին մէջ Չարդիս մատենաշարով Փարիզի «Նոր Յառաջ»-ի գործակցութեամբ ցարդ հրատարակուած է 6 գիրք:

Եական է, որ գործող բոլոր մանկապատանեկան կայքերն ու յաւելուածները արժանանան բացառիկ ուշադրութեան, ունենան կանոնաւոր նիւթական յատկացումներ, որպէսզի աւելի արագ յաճախականութեամբ թարգմանեն իրենք-զիրենք՝ թէ՛ բովանդակութեան եւ թէ՛ մատուցման գործիքներու ամուսով: Գաղտնիք չէ, որ մանուկներ եւ պատանիներ շուտ կը ձանձրանան. անոնք անընդհատ նորութեան եւ փոփոխութեան հետամուտ են՝ ի տարբերութիւն տարեցներու: Ուստի իրենց հրամցող ամէն ինչ պէտք չէ «հիննայ», այլ կանոնաւորաբար հարստանայ ու բարելաւուի:

Արեւմտահայ մանկապատանեկան մարզին մէջ ցարդ կատարուածը գնահատելի է, մասնաւոր եթէ բաղդատենք երկու տասնամեակ առաջուան վիճակին, սակայն բավարար չէ: Հարկ է, որ այդ կարեւոր մարզը նոր նախաձեռնութիւններով հարստանայ, որպէսզի հայ նոր սերունդը իր տրամադրութեան տակ ունենայ հարուստ հաւաքածոյ մը գիրքերու, պարբերաթերթերու, յաւելուածներու եւ կայքերու՝ այլազան բովանդակութեամբ եւ

Շար. 12 5

Թուրքիոյ նուրջ

ԸՍՏ ԱՌՑԱՆՑ ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒ՝ ԷՐՏՈՂԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒՈՎ ՆԱԽԱԳԱՆ ՎԵՐԵՆՏՐՈՒԵԼՈՒ ԿԱՐԵՆԻՈՒԹԻՒՆ ԶՈՒՆԻ

Թրքական իշխանամերձ «Areda Survey» վիճակագրական-հետազոտական ընկերութիւնը 2023-ի նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւններուն ընդառաջ կազմակերպած է առցանց հարցախոյզ մը, որուն արդիւնքը ցոյց տուած է, որ ներկայ նախագահ Էրտողան առաջին փուլով վերընտրուելու կարելիութիւն չունի:

«Էրմենիհապեր»-ի համաձայն, հարցումը ուղղուած է տոյն տարուան 26-31 Յոկտեմբերի ժամանակահատուածին, 26 նահանգի մէջ, 18 տարեկանէն բարձր 2.000 քաղաքացիներու:

Մասնակիցները պատասխանած են՝ «Եթէ այս շաբաթ խորհրդարանական ընտրութիւններ տեղի ունենան, ո՞ր կուսակցութեան եւ նախագահի ո՞ր թեկնածուին ի նպաստ կը քուէարկէք» հարցումին:



Պատկերը հետեւեալը եղած է.

- Իշխող «Արդարութիւն եւ Զարգացում Կուսակցութիւն» - 38,1%
- «Ժողովրդահանրապետական Կուսակցութիւն» - 25%
- «Ժողովուրդներու Ժողովրդավար Կուսակցութիւն» - 10,5%
- «Լաւ Կուսակցութիւն» - 10,2%
- «Ազգայնական Շարժում Կուսակցութիւն» - 10,1%
- «Նոր Բարօրութիւն Կուսակցութիւն» - 1,5%
- «Յաղթանակ Կուսակցութիւն» - 1,3%
- «Ժողովրդավարութիւն եւ Յառաջընթաց Կուսակցութիւն» - 1,2%

Այլ կուսակցութիւններ ստացած են մէկ տոկոսէն ալ նուազ ձայներ: Էրտողան՝ իբրեւ նախագահի թեկնածու, ստացած է ձայներու 48,6%-ը, Անգարայի քաղաքապետ, ընդդիմադիր ԺՀԿ-ի անդամ Մանսուր Եաւաշը՝ 19,4%-ը, իսկ ԺՀԿ առաջնորդ Էմմալ Էրընդարողլուն՝ 16,9%-ը:

ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑԱԿԱՆՆԵՐՈՒ ԶԵՐՄ ՀԱՄԱՆՄԲՈՒՄ

Բերիոյ Հայոց Թեմի Ուսումնական Խորհուրդը Ուրբաթ, 2 Ղեկտեմբեր 2022-ին սիրով կը հրաւիրէ իր նախկին «Ս.Մեսրոպ Մաշտոց» երգչախումբի վաստակաւոր դաշնակահարներն ու աշակերտները, որոնք երկար տարիներ մաս կազմած են այս պատուաբեր երգչախումբին, Ազգ. Կիւլպենկեան վարժարան, երեկոյեան ժամը 5:00-ին:

2023 տարեշրջանը «Ս.Մեսրոպ Մաշտոց» երգչախումբի Յիսնամեայ Յօբելեանն է:

Այսօր աշխարհի չորս կողմը անպայման կը գտնուին «Ս.Մեսրոպ Մաշտոց» երգչախումբի նախկին աշակերտներէն, որոնք արդէն իսկ երգի եւ երաժշտութեան մէջ բարձր դիրքերու հասած են: Եթէ իրենց մօտ կը գտնուին խմբանկարներ, անհատական նկարներ, յայտագիրներ, տոմսեր, յուշանուէրներ, պտոյտներու նկարներ կամ ինչ որ շահեկան եւ արխիւային բնոյթ կը կրէ, մեր ջերմ փափաքն է, որ նամակ ուղարկեն Ուսումնական Խորհուրդի դիմատետրի էջին կամ Whatsapp-ի հետեւեալ թիւին 0990450898:

Մեր լաւագոյն բարեմաղթութիւնները եւ կանխայայտ շնորհակալութիւնը կը յայտնենք ձեր բոլորին:

Չայս ընդունեցէ՛ք որպէս անձնական հրաւեր:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Հանգուցեալ

ԷՕԺԵՆԻ ԴԱՆԻԷԼԵԱՆԻ



Հանգուցեալի մահուան Ա. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 27 Նոյեմբեր 2022-ին, յաւարտ Ս. եւ Աննահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Վիլլաներ - Հալեպ:

Պրիմակետ

ՅԻՐԸՆԿԱԼՈՒԹԻՒՆ



Մարուշ Երամեան

Մենք հայերս, մանաւանդ հալէպահայերս միշտ նշանաւոր եղած ենք մեր հիւրընկալ հոգիով, դուրսէն եկած որեւէ հիւրի հանդէպ մեր պարտականութիւնը մեծ սիրով կատարելով. եւ անշուշտ երբեք չենք տեսած Նոյն տեսակի եւ Նոյն չափի հիւրընկալութիւն, այլ գաղութներու, քաղաքներու կամ երկիրներու մէջ: Արդեօ՞ք ասիկա կու գայ «Յիւրը Աստուծոյ օրհնութիւնն է» համոզումէն, թէ՞ կու գայ մեր գիտակցութենէն, արիւնով մեզի հասած մեր յիշատակներէն, թէ որքան թանկագին է օտար քաղաքի մը մէջ հիւրի մը հանդէպ ցուցաբերուած հիւրընկալութիւնը:

Ի՞նչ ալ որ ըլլայ պատճառը, հիւրը հալէպահայուն համար սրբութիւն եղած է միշտ, «տաք» թէ «պաղ» օրերուն, ամատուրեան թէ սակաւութեան մէջ:



Այս բոլորին մասին կը մտածէի, երբ մանկութեանս յիշողութիւնները խուժեցին վրայ, ժպիտ բերելով կարօտ հոգիիս:

Յիւրասիրութիւնը միշտ Նոյն ձեւով չէ եղած է Յալէպի մէջ: Սկիզբը սուրճն էր եւ սուրճին հետ հրամցուած տունը պատրաստուած անխուսափելի անուշը՝ սմբուկի, ընկոյզի, դդումի, սերկելիի, թուզի կամ եղանակին որեւէ պտուղի անուշը, որ կը հրամցուէր յատուկ ամանով եւ որուն կ'ընկերանար գոյգ աչքերով այլ աման մը (ընդհանրապէս տան փոքր աղջիկը կ'ըլլար այդ ամանը բռնողը) որուն մէկ աչքին մէջ կ'ըլլային անուշին պատառաքաղները, միւսին մէջ՝ ջուր: Յիւրը կ'առնէր պատառաքաղ մը, կը վերցնէր անոյշի կտոր մը եւ ճաշակելէ ետք գայն կը դնէր ջուրով լեցուն կողմը:

Եւ ասիկա կ'ըլլար ամբողջ հիւրասիրութիւնը: Կ'երեւի յիսունական թուականներն էին:

Անկէ ետքի շրջանին կիները սկսան տան մէջ քաղցրաւենիք պատրաստել եւ սուրճին հետ հրամցնել, իսկ անոյշը մնաց որպէս սուրճէն ետքի հրամցուելիք:

Մէկ կողմէն հայերուն տնտեսական վիճակը սկսած էր բարելաւուիլ, միւս կողմէն տակաւին ոչ ոք հեռաձայն ունէր տան մէջ, կամ քիչերն էին որոնք ունէին. հետեւաբար հալէպցիները լաւ ձեւ մը գտեր էին յաճախ այցելութեան երթալու իրարու, առանց «անակնկալ հիւրի» տհաճ զգացողութիւն տալու տանտէրերուն. ստեղծուէր էր «օր»ը:

Իւրաքանչիւր ընտանիք ամսուան մէջ իր օրը ունէր: Տանտիկիները այդ օր Նախ աղուոր մաքրութիւն մը կ'ընէր տան մէջ, ապա կը լծուէր քանի մը տեսակ քաղցրաւենիք պատրաստելու: Այդ օրուան ճաշը կամ երեկուանէն մնացածը կ'ըլլար, կամ ոտքի վրայ պատրաստուած բան մը:

Թէ ովքե՞ր եւ քանի՞ հոգի պիտի գային այդ օր, անակնկալ կ'ըլլար. բայց որովհետեւ տանտիկիները կազմ ու պատրաստ էր հիւր ընդունելու, անակնկալը կը դառնար հաճելի:


Հազիւ մէկ-երկու տեսակ քաղցրաւենիք կը պատրաստուէր եւ անշուշտ՝ անխուսափելի սուրճը, որ կրնար կրկնուիլ երեկոյի աւարտին, երբ հիւրերէն մէկը ըսէր. «Երթաք բարի»-ի սուրճ մըն ալ տունէ՞ք, որ երթանք ...

Սուրճի շատ հետաքրքրական պատմութիւն մը ունի մայրս. օր մը քոյրերն ու գարմուհիները կու գան անակնկալ կերպով, մինչ ինք երկու ժամ ետք պէտք էր գործի հասնէր: Բայց երկու ժամ ունէր իր տանտիկիի պարտականութիւնը կատարելու համար:

–Բոլոր հիւրասիրութիւնները ըրի, տունը ի՞նչ որ ունէի հրամցուցի. բայց այս մարդիկը չէին երթար: Սկսայ մտածել թէ ուրիշ ի՞նչ կրնամ հրամցնել:



ԱՂՕԹՔԻ ՊԱՇ



Առաքել Արթ. Գատեհճեան

«Իմ աղօթքս Զեզի մատուցուած խունկ թող ըլլայ, վեր բարձրացած ձեռքերս՝ իրիկնային գոհ» (Սաղմոս 141. 2):

Խցիկս կրկին քաշուած եմ,
Հոգիս բաղձանքը Զեզի՛ կը մատուցեմ,
Բարբառող բուրվառս կը բռնեմ,
Զեզի՛ առատօրէն խունկ կը ծխեմ:

Երկնահամ բիւրաւոր բառեր կը շարեմ,
Դեսպան հրեշտակս անխնայ կը չարչարեմ,
Բռնկած հրդեհս անոր կը փոխանցեմ,
Արցունքի պարկերս իր ուսերուն կը բեռնեմ:



Սիրտս մոմի լոյսի սման կը թրթռայ,
Էութիւնս երկնաւոր Էակին կը ցանկայ,
Հոգիս Բարձրեալին մօտ կը փութայ,
Մարմինս Երկրպագելիին առջեւ կ'իյնայ:

Խնկաբերան կ'աղօթեմ Զեզի,
Հրամաշ կանթեղս կը նուիրաբերեմ Զեզի,
Սրտագեղ փառաբանքս կը բարձրացնեմ Զեզի,
Ո՛վ Աստուած, հազար փա՛ռք Զեզի:

Անթիլիաս, Լիբանան

Ինչ որ հրամցուցի, դեռ իրենք կը շարունակէին նստիլ: Յետոյ ելան գացին, ես ալ շատ արագ, ամէն բան ձգած գործի վագեցի: Երբ վերադարձայ, սկսայ պնակները լուալ, բայց սուրճի գաւաթ-պնակ չկար: «Մամա՛, – ըսի կեսրոջս, – սուրճի գաւաթները դո՞ւն լուացիր», թէւ չէի հասկնար, թէ կոյր կեսուրս ինչպէ՞ս լուացած պիտի ըլլար սուրճի գաւաթները: Բայց կեսուրս կշտամբանքով ըսաւ՝ «Օղոր՛ւլ, դուն սուրճ հրամցուցի՞ր, որ ես ալ գաւաթները լուայի ...»: Այն ատեն հասկցայ, թէ ի՞նչ կը սպասէին հիւրերս ... Մարդ Աստուծոյ, ըսէիք որ սուրճ կ'ուզէք: Ամբողջովին մոռցեր էի սուրճը ...

Յետոյ հիւրասիրութիւնները ճոխացան, մանաւանդ երբ կիները յետմիջօրէին սկսան իրարու երթալ. ալ թապպուլէ, ալ ֆաթթուշ, ալ պտօրեկի տեսակներ, վրայէն ալ անշուշտ քաղցրեղէն:

Եկաւ ատեն մը, երբ հիւրընկալութիւնը ընթրիք կը նշանակէր, խմիչքով եւ բազմատեսակ ուտեստներով: Հալէպահայ կիները գրեթէ իրարու հետ կը մրցէին իրենց նոր համադամներով, որոնց խոհագրերը շատեր Նոյն-իսկ գաղտնի կը պահէին:

Պէտք է խոստովանիլ, թէ որքան որ Հալէպը նշանաւոր է իր խոհանոցով, հալէպահայ կիները Նոյնքան նշանաւոր են իրենց խոհանոցային հրմտութեամբ, իրենց քիմքին նրբութեամբ եւ մատներուն ճարտարութեամբ:

Սուրիական պատերազմին օրերը փաստեցին այս հմտութիւնը, նոր «նուաճում»-ներու տանելով հալէպահայ տիկիները: Ի պատիւ իրենց պէտք է խոստովանիլ, որ ոչ մէկ ծեր եւ ոչ մէկ մանուկ անօթի կամ անպատասպար մնաց այդ օրերուն, որոնք շատ ծանր էին, կրնամ հաստատել ականատեսի վկայութեամբ: Ազգային Ծերանոցի եւ Պատասպարանի տաքուկ յարկերուն տակ մանուկներն ու ծերերը սառնամանիքի այդ օրերուն գիրենք հոգացող ձեռքեր գտած էին:

Ճիշդ է որ օրերը փոխուած են, օրերը բնաւ բարի չեն այս օրերուն, բայց մեր հիւրընկալութեան ոգին, կը կարծեմ թէ, չէ փոխուած:

Ծնողքիս տան մէջ ընդունելութեան օրը ամէն ամսուն 28-ին էր: Բարի օր ձեզի:

ԿԻՐՕ ՄԱՆՈՅԵԱՆԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՃԵՉԻՐԵԻ ՇՐՋԱՆ


ՀՀԴ 132-ամեակի տոնակատարության առիթով ՀՀԴ Բիւրոյի անդամ, Հայ Դատի եւ քաղաքական հարցերու գրասենեակի պատասխանատու Կիրո Մանոյեան այցելեց Գամիշլի:

Երկուշաբթի, 21 Նոյեմբերին, Մանոյեան այցելեց Գամիշլիի Ազգային Փոխանորդարան, ուր դիմադրուեցաւ Ճեզիրեի Առաջնորդական փոխանորդ Հոգ. Տ. Լեւոն Վրդ. Եղիայեանի եւ ազգայիններու, թաղականութիւն եւ Արժ. Տեր Պսակ Զիւյ. Պերպերեանի կողմէ: Հոգեշնորհի Հայր Սուրբը ողջունեց մեծայարգ հիւրը եւ անոր ընկերակցող պատուիրակներունը, ապա ամփոփ զեկոյցով ներկայացուց Ճեզիրեի շրջանի ներկայ պատկերը եւ հայապահպանութեան տրքնաջան աշխատանքը: Հոգեշնորհի Հայր Սուրբը շնորհակցեց. «Այսպիսի պատուիրակները երբ փոքր շրջաններ կ'այցելեն, մեծ եռանդ կուտան, կենսունակութիւն եւ աշխատանքի նոր թափ կը յառաջացնեն, խրախուսիչ կ'ըլլան նամանականոր երիտասարդ տարրին համար, ի մասնաւորի քաղաքական այս դժուար իրավիճակին մէջ»:



Ապա ան Մանոյեանը ծա-
պատուիրակները երբ փոքր շրջաններ կ'այցելեն, մեծ եռանդ կուտան, կենսունակութիւն եւ աշխատանքի նոր թափ կը յառաջացնեն, խրախուսիչ կ'ըլլան նամանականոր երիտասարդ տարրին համար, ի մասնաւորի քաղաքական այս դժուար իրավիճակին մէջ»:

Ապա ան Մանոյեանը ծա-
պատուիրակները երբ փոքր շրջաններ կ'այցելեն, մեծ եռանդ կուտան, կենսունակութիւն եւ աշխատանքի նոր թափ կը յառաջացնեն, խրախուսիչ կ'ըլլան նամանականոր երիտասարդ տարրին համար, ի մասնաւորի քաղաքական այս դժուար իրավիճակին մէջ»:



Նօթացուց Գամիշլիի արխիւին եւ պատմական ու կրօնական իրերուն: Իր կարգին Կիրո Մանոյեան գոհունակութիւնը յայտնեց այս հանդիպումին առիթով, յարատեւ վերելք եւ յաջողութիւն մաղթելով ազգային բոլոր մարմիններուն:

Երեքշաբթի, 22 Նոյեմբերին, տեղի ունեցաւ Համազգայինի «Աւետիս Ահարոնեան» կեդրոնի բացման հանդիսութիւնը, որուն ներկայ էին Համազգայինի Սուրբիոյ Շրջանային վարչութեան անդամներն ու ՀՀԴ Բիւրոյի ան-



դամ Կիրո Մանոյեանը: Կեդրոնը պիտի ծառայէ Համազգայինի բազմաբնոյթ մշակութային գործունեութեան:

Մանոյեան այցելութիւն տուաւ Գամիշլիի Ազգ. Մանկապարտեզ եւ Ազգ. Եփրատ վարժարանի Զորեքշաբթի, 23 Նոյեմբերին: Վարժարաններու հոգաբարձութիւնն ու տնօրէնները զեկոյցով մը ներկայացուցին վարժարաններու ներկայ իրավիճակը, անոնց դիմագրաւած մարտահրաւերները եւ

ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹԻՒՆԸ ՅԱՂԹԱՆԱԿ Է



Շողեր Տեր Յովհաննեսեան

Ներողութիւն խնդրելուն իմաստը միշտ ալ սխալ հասկցուած է մեր միջավայրին մէջ: Ներողամիտ ըլլալ չի նշանակեր տկար ըլլալ կամ ինքզինք թերագնահատել: Ընդհակառակը՝ ներողութիւն խնդրողին լաւ վարքագիծը ցոյց կու տայ: Ներողամիտ եղողը այն անձն է, որ չ'ուզեր ապրիլ կեանք մը լեցուն ատելութեամբ եւ դիմադրութեամբ, այլ կը փափաքի կեանքը շարունակել սիրով եւ համերաշխութեամբ:



Ներողութիւն խնդրելով շատ մը բաներ կրնան փոխուիլ կեանքի մէջ: Օրինակ. ներողութեամբ լեցուն պահերդ ուրախութեամբ ու խաղաղութեամբ կը փոխարինուին: Գործուած սխալին պատճառած ցաւը կամաց-կամաց կը նուազի:

Եթէ մարդ ներողութիւն խնդրէ, չի նշանակեր որ անպայման ինք սխալած է, այլ ան իր արարքով կ'արժեւորէ իր յարաբերութիւնը եւ ցոյց կու տայ, որ ուրիշներուն հետ յարաբերութիւնը պահելը աւելի կարեւոր է, քան իր անձին յաղթանակը:

Այս պատճառով ալ պէտք է ճշդեք ներողութիւն բառին իմաստը ու զայն զանազանեք տկարութենէն, համարելով՝ անձի գոյութիւն:

Ուստի, միշտ ներեք եւ ներողութիւն խնդրեք, ու այդ ժամանակ է որ մեր կեանքին մէջ պիտի տիրէ խաղաղութիւնը:

ապագայ ծրագիրները:

Մանոյեան գնահատեց ազգային վարժարաններուն աշխատանքը՝ մա-



նաւանդ քաղաքական եւ տնտեսական ներկայ դժուար պայմաններուն մէջ, վեր առնելով հայ մշակներուն նուիրեալ ծառայութիւնն ու անխոնջ աշ-



խատանքը: Ապա Մանոյեան յարատեւ վերելքի եւ նորանոր յաջողութիւններու մաղթանքով հրաժեշտ տուաւ բոլորին:

ՈՒԹ ՊԻԼԻՈՆԵՆ ԱՆԴԻՆ



Յարութին Պերպերեան

Քանի մը օր առաջ լուրերը յայտարարեցին, որ մարդկութիւնը անցած է ութ պիլիոնի թուաքանակը, իսկ եօթը պիլիոնէն ութ անցումը կատարուած է տասներկու տարուան ընթացքին: Դեռ այս աճը տեղի ունեցած է եւ կ'ունենայ անկախ Սոմալիոյ, Եմենի կամ Ափրիկէի մէջ այլ պետութեան մէջ տեղի ունեցող պատերազմէն կամ կրկնուող սովէն, կլիմայական փոփոխութիւններու, երաշտի ու հեղեղներու ստեղծած պայմաններէն:

Համարեա՛ր նոյն օրերուն Եգիպտոսի մէջ (Sharm el Sheikh, 6-էն 18 Նոյեմբեր) կլիմայական փոփոխութիւններուն կամ աղետին գծով միջազգային համագումարն է, ուր յաճախ որոշումներ կ'առնուին եւ կ'իսով կամ երբեք չեն յարգուիր, փաստ՝ Քիթոյի, Քոփենհակի կամ Փարիզի համագումարները: Կը բաւէ Թրամփին նման մէկը ԱՄՆ-ի նախագահ ընտրուի,



որպէսզի ամբողջովին անտես նման ժողովները, իսկ Պրագիլի նախագահ Պոլսոնարոն շարունակէ քաջալերել Ամազոնի անտառներուն արմատախլումը՝ ի նպաստ հանքերու եւ երկրագործական տարածքներու (բարեբախտաբար, Լուլայի վերընտրութիւնը, իր նախագահութեան օրերու կիրարկումներէն եւ խոստումներէն մեկնած, կրնայ լայն չափով կասեցնել այս գործընթացը): Հետաքրքրականօրէն, այս համագումարին վեց հարիւր հոգիով ամենէն մեծ պատուիրակութիւնը կը կազմեն քարիւղի ընկերութիւններու լուսնաստները, որոնք տարբեր պետութիւններու վրայ ճնշում բանեցնել կամ խոստումներ տալով ազդեցութիւն կը գործեն ... Դժբախտաբար, որքան ալ թափանցիկութեան եւ որոշումներ յարգելու խոստումներ տրուին՝ առեւտրական մրցակցութեան առջնչուած հարցեր տարակարծութիւններ կը ստեղծեն կամ կը խանգարեն նման կենսական որոշումներու կիրարկումը: Անշուշտ գերպետութիւններու կողմէ կեղծիքի մեծ բաժին մը կայ նաեւ այս բոլորին մէջ, օրինակ՝ Պայտընի կառավարութիւնը որ այնքան կը շեշտէ մաքուր, կանաչ ու ժամկէտի գործածութիւնը, ինչո՞ւ այնքան կարեւորութիւն կու տայ իրեն յարմար քարիւղի ու բնական կազի փոխանցումի ճամբաներուն եւ նոյնիսկ պատերազմներ կը մղէ զանոնք պահպանելու կամ այլ պետութիւններուն ուղիները փակելու համար ...

Տարօրինակ ժամանակներու մէջ կ'ապրինք. մինչ Քովիտի համաճարակին պատճառաւ առաջացած անգործութեան առթիւ իրենց ժողովուրդին տրուելիք օժանդակութեան համար Միացեալ Նահանգներու երկու կուսակցութեանց անդամները, տնտեսական մտահոգութիւններով, այդքան սուր տարակարծութեան մէջ էին, Ուքրանիոյ պատերազմի բռնկումէն ետք, անոր աւելի քան տասնապատիկը, ռազմական թէ մարդկային օժանդակութեան ձեւին տակ՝ համաճայնաբար կը յատկացնեն այդ երկրին ...:

Անշուշտ իշխող տնտեսական թէ քաղաքական ընտրանքին համար այս պատերազմը տարբեր հարթակ է, որոնց համար կարեւոր չեն անօթութենէ մեռնող երեխաները, կլիմայական աղետէն հարուածուող աղքատ երկիրներու կացութիւնը, նոյնիսկ Իրաքէն կամ Աֆղանիստանէն վերադարձող բանակայիններու առողջական վիճակը կամ հոգեկան խանգարումները ... Աւելի՛ մեծ ռազմավարական նպատակակետեր կան: Մեծ ծրագրերը եւ քարիւղէն կամ գէնքի առեւտուրէն գոյացած գումարներն ու փոխադարձ շահերը կը խօսին, վկայ՝ արցախեան վերջին պատերազմին ստեղծած կացութիւնը: Աւելի լայն մակարդակի վրայ՝ Ուքրանիոյ պատերազմը. վերջերս «Նիւզուիք» կը հարորդէր, որ Միացեալ Նահանգներու ռազմավարական հրամանատարութեան ղեկավար, ծովուծի ծովակալ Չարլզ Ռիչըրտ նախագահուցուցած էր, որ ուքրանական ճգնաժամը նախնական պատորաստութիւն է, եւ որ Միացեալ Նահանգները, պէտք է պատրաստ ըլլան Չինաստանի մասնակցութեամբ համաշխարհային հակամարտութեան: Ամեն պարագայի, Միացեալ Նահանգները տարբեր միջոցներով միշտ ալ հասկցուցին, որ այս պատերազմին հիմնական նպատակը Ռուսիոյ տկարացումը եղած է: Որքան ալ նախատեսելի ըլլար, չեմ արդարացներ Ռու-

սիոյ բիրտ հակազդեցութիւնը, սակայն այս հակամարտութեան հիմնական գոհը Ուքրանիան եւ Ուքրանիոյ ժողովուրդն է: Բոլոր գերպետութիւններու պայքարներուն ընթացքին տեսանք՝ կը բաւէ խամաճիկ մը կամ սահմանափակ կարողութիւններով մէկը բերել իշխանութեան վրայ, որպէսզի կարելի ըլլայ այդ գերպետութեան ծրագրերը մասնակի կամ ամբողջական ձեւով իրականացնել:

Այս տարբեր ազդակները ո՞ր պիտի առաջնորդեն մեզ: Մէկ կողմէ՝ չենք գիտեր, թէ մարդկութեան այս թուային աճը ո՞ր կրնայ հասնիլ, միւս կողմէ՝ տնտեսական եւ արհեստագիտական միջոցներու լայն տարբերութիւնը տարբեր երկիրներու միջեւ, որ կենսամակարդակի անհաւասարակընթացութիւն կը ստեղծէ: Չարմանալի՞ է, որ Ափրիկէէն, Միջին Արեւելքէն կամ այլ երկիրներէ գաղթականներ նոյնիսկ ծովը խեղդուելու վտանգը կ'անտեսեն Արեւմտեան Եւրոպայի երկիրներ հասնելու համար, իսկ Հարաւային Ամերիկայի երկիրներէն տասնեակ հազարաւորներ Միացեալ Նահանգներու սահմանը կը փորձեն հատել՝ հակառակ բարձրացուած պատերուն, ընտանիքներու բաժանումին, արգելափակումին եւ այլն:

Դժբախտաբար այս հարցերը Արեւմուտքի եւ գերպետութիւններու հիմնական օրակարգին վրայ չեն, այլ անոնց միջեւ տնտեսական ու ռազմական սուր մրցակցութիւն մը առաջնահերթութիւն կը կազմէ: Հակառակ համագումարներու եւ գիտաժողովներու՝ մթնոլորտի ջեռուցումը պիտի շարունակէ բարձրանալ, անոր հետեւող աղետները աւելի սուր ու զգալի պիտի դառնան, աղքատ երկիրներ միջոցներ չունենալով աւելի ծանր կերպով պիտի զգան անոր հետեւանքները, եւ երկրագունդի բնակչութիւնը շարունակելով աճիլ՝ նուազ միջոցներ պիտի գտնէ արժանապատիւ կենսամակարդակ մը ապահովելու իր բոլոր գաւակներուն համար:

«ՍՓԻՒՌ»...

Սկիզբ՝ էջ 13

խոհեմ եւ դրական լուծումներ ծրագրելու կերպերը: Պահ մը լաւատեսութեամբ կը միաձուլէ հեղինակի իր արշալոյսներու ոգեւորող ձգտումը, որ նա եւ ընթերցողներու սալ կը կարծես ըլլայ:

Անուրանալի են հեղինակի գրական ստեղծագործութիւններուն մէջ խոստովանանքի համագօր փաստագրութեան եւ վկայագրութեան հայահունչ աւանդը, զգայուն անհատականութեան կերպարը, նկարագրի գեղեցիկ երանգն ու որակը, որոնց հետ դժուար է չհամաձայնիլ:

Սփիւռքի ժամանակաշրջանները վերադիտող ու վերագծող մըն է իր քննարկող մեկնաբանութիւններով: Վերաբնութագրող մըն է ամենաստվորական երեւոյթները, որոնք կը յատկանշուին տարբեր շերտութեամբ, թելադրութեամբ, ներգործութեամբ եւ իմացական շահեկանութեամբ: Վերծանող մըն է ոչ միայն Սփիւռքի անտեղի խորշումներուն, այլեւ իր յիշեցումներով, մատնանշումներով զգուշացնող մըն է սփիւռքահայու անհամ բարոյթէն: Հեղինակը իր հատորին մէջ հաստատ հաւատքով ու անխախտ թափով պատգամաբեր մըն է, կը շարունակէ թաթխել իր գրիչը մեղանազին մէջ, սրտապնդող մեծ յոյսով վերաբնութագրելու, խորաչափելու սփիւռքահայուն անչափելի ինքնութեան ճշմարտութիւնը, խանդավառ հաւատքով դիմակայելու Սփիւռքի շնչասպար իրականութիւնները, խորագգալու տեսակաւոր անկոչ տագնապները:

Գ. Պետիկեանի գրութիւնները «Սփիւռք» հատորին մէջ միայն գրական շարադրանքներ չեն եւ ոչ ալ վիպական պոռթկումներ, անոնք կը միտին ըլլալ թափանցող, անյապարհ եւ սրտահաճոյ հրաւեր մը բոլորիս՝ նոր տեսլականով ծրագրելու, նախագծելու եւ դիմագրաւելու մա-

նաւանդ ներկայ ժամանակներու Սփիւռքի սպառնացող բոլոր մարտահրաւերները, լաւ գիտնալով, որ այդ տրամախոհութիւնը միայն բարի ցանկութիւններով չըլլար, իր բաղձանք հրաւերը՝ անժամանակ է, արդար եւ իրաւ է: «Սփիւռքը» հատորին մէջ, Գ. Պետիկեանի ահագանգը հնչել է, ցայտուն եւ հաստատակամ է, այդ մէկը կարելի է հաստատել իր խոհուն դիտարկումներէն մեկուն մէջ՝ «այլեւս յոգնած ենք կարգախօսներ լսելէ, իրարու հետ վիճելէ, գիրար ատելէ, մեր բախտը ուրիշին կապելէ: «Ես»-ն ու «անձնական»-ը գերադասած ենք «մենք»-ին: Վկայ՝ Սփիւռքի ու հայրենիքի մեր ժողովուրդի իրավիճակը»: Յանուն ապագայի եւ մանաւանդ յաջորդող սերունդներուն համար, ստիպուած ենք սրտաբան, կառուցողական եւ գործնական մտածելու, մասնաւորաբար ծրագրելու գալիք ժամանակներու սփիւռքահայութեան գերխնդիրները:

Հեղինակին այս հատորն ալ, ինչպէս նախորդները հարուստ են ներգործութեամբ, նկատառելի նշանակութեամբ կը համակեն ընթերցողը, երբ սքանչելի բառագանձը կարդանք իր արձակ գրութիւններուն մէջ: Հեղինակին բնատուր գրական շնորհքը կը թեւածէ հաճելի, մտերիմ եւ նոյնքան ալ սրտայորոյր պատումներու վերապրեցնող բովանդակութեամբ, անոնք էապէս վերականգնողական եւ աղերսախառն իմաստ մը ունին, ընթերցողներս կը մղեն իր ներշնչած անձայն խոկումի հոգեվիճակներուն հետ ապրելու:

Կը մնայ շերտօրէն յանձնարարել այս հատորին ընթերցումը, որուն վարձատրութիւնը պիտի ըլլայ մեծապէս հոգեկան բաւարարութեան անխառն վայելքը: Իսկ հեղինակին՝ ցանկալով անկաշկանդ գրական թռիչք եւ նոյն ուղիով ու կիզակետով նորանոր եւ տեսիլաստեղծ խորագրերը:

ՀԱՐՑԱԶՈՒՅ

ՆԱՅԻՐԻ ՏԵՐՏԵՐԵԱՆ. «ԵԹԷ ՏԵՂ ՄԸ ՏԱԳՆԱՊ ԿԱՅ ԵՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՆՐԱՊԱՐԱԿԷ, ԶՕՐԱԿՈՉ ԿՈՒՂԱԷ ԻՐ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ, ՄԵՐ ԸՆԿԵՐՈՒՄՆԵՐԸ ԱՌԱՋԻՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐԸ Կ'ԸԼԼԱՆ»

ՀՕՄ-ի Կեդր. Վարչության ատենապետ Նախիր Տերտերեան ժամանեց Հայկա: Այցելության օրերուն Տերտերեան այցելեց «Գանձասար»-ի խմբագրատուն եւ ծանօթացաւ խմբագրակազմի աշխատանքին: Այս առիթով «Գանձասար» հարցազրոյց մը ունեցաւ ՀՕՄ-ի Կեդր. Վարչության ատենապետին հետ, որ կը ներկայացնենք ստորեւ:

«Գանձասար»- Բարի եկած էք Հայկա, սիրելի ընկերուհի: Դուք կու գաք Լիբանանէն, ուր ժամանած էք ԴՅԴ Բիւրոյի նախաձեռնած ԴՅԴ-ի ուղեկից միութիւններու խորհրդատուական մասնակցելու: Միացեալ ժողովները, խորհրդակցութիւնները որքանո՞վ կարեւոր կը համարէք: Ինչպիսի՞ միացեալ մարտահրաւերներ, նպատակներ ուրուագծուեցան այս երեք միութիւններու կեդրոնական վարչութիւններու հանդիպումով:

Նայիրի Տերտերեան: Ուրախ եմ Սփիւռքի մայր գաղութներէն մէկը՝ Հայկա, այցելելուն համար: Ինծի համար անձնապէս առաւել ուրախութիւն է հոս գտնուիլը, որովհետեւ մօրս ծննդավայրն է Հայկաը: Լիբանանի պարագային, այո՛, Բիւրօն հրաւիրած էր ԴՅԴ-ի երեք ուղեկից կազմակերպութիւնները՝ ՀՕՄ-ը, ՀՄԸՄ-ը եւ Համագ-գայինը, որ առիթ տայ երեք կեդրոնական վարչութիւններուն միասին գրուցելու, իրենց աշխատանքները ներկայացնելու եւ ներկայ պայմաններու լոյսին տակ ապագայի ուղին ուրուագծելու: Դրական եւ արդիւնաւետ ժողով մըն էր, որ առիթ հանդիսացաւ իրար ծանօթանալու եւ մէկս միւսին ծրագիրները իմանալու: Օրակարգ երը կը վերաբերէին նաեւ նոր միաւորներ ստեղծելու գաւազան տարածաշրջաններէ ներս: Եթէ ՀՄԸՄ-ը ունի միաւոր մը Թիֆլիսի մէջ, օրինակ, կրնայ օգտակար դառնալ ՀՕՄ-ին՝ իր կարգին մասնաճիւղ մը ստեղծելու Թիֆլիսի մէջ կամ Ծոցի տարբեր երկիրներուն մէջ եւ այլն: Անշուշտ մեր քննարկումներուն շեշտը դրինք երիտասարդութեան ներգրաման վրայ: Ի ուրախութիւն բոլորիս, սակայն, հոս՝ Հայկայի մէջ, նկատեցի թէ ՍՕԽ-ը արդէն իսկ երիտասարդներով լի է: Ամեն պարագայի պէտք է երիտասարդները տեսաբար ներշնչել կամաւոր աշխատանք տանելու, ՀՕՄ-ի տարբեր մասնաճիւղերուն մէջ ներգրամուտելու: Խորհրդատուական կազմակերպութիւնը կարգ մը ծրագիրներ միացեալ ճիգերով իրագործելու անհրաժեշտութիւնը: Բաւական դրական հանդիպում մըն էր, մանաւանդ երեկոյեան երբ առիթ տրուեցաւ երեք ուղեկից միութիւն-

Վարչության, ՍՕԽ-ի ընկերաբժշկական կեդրոնը մեղուակեթակի մը նման գործեց պատերազմի ամենէն ծանր օրերուն անգամ: Անդրադարձ մը կը կատարէ՞ք այդ ծրագիրներուն: Անոնցմէ քանի՞ն կը շարունակուին:

«Ն.Տ.»- Պատերազմի տարիներուն Նախ սկսաւ հայկական դպրոցներու օժանդակութիւնը Սուրիոյ մէջ, յետոյ շարունակուեցաւ «Պնակ Մը Տաք Ծաշ»-ի ծրագիրը, որուն նպատակն էր օժանդակելու Սուրիոյ մէջ գտնուող հայկական ընկերակազմներուն թիւը աստիճանաբար մեծացաւ: Այո՛, ՍՕԽ-ը նախքան պատերազմ ունէր այս ծրագիրը, սակայն սահմանափակ թիւի մը կ'օժանդակէր, ուստի գարկ տուինք որ մեր միաւորները գումար հայթայթեն այս ծրագիրը ընդլայնելու համար: Անոր կողքին կային «Տաքուկ Բնակարան»-ը եւ այլ ծրագիրներ: Այսօր ՍՕԽ-ը ինքնաբաւ է, եւ իսկապէս հիացած եւ հպարտ եմ: «Պնակ Մը Տաք Ծաշ»-ի ծրագիրը կը շարունակուի մինչեւ օրս: Ունինք նաեւ երեխաներու Ամանորեան ծրագիր, ինչպէս նաեւ Ամանորի տարբեր ծրագիրներ՝ Հայ Ծերանոցին, Ազգ. Պատասպարանին եւ այլն: Ունինք «Տաքուկ Զգեստ» ծրագիրը, որ քանակական մասնաճիւղը կը հովանաւորէ եւ յոյսով ենք, որ այս այցելութիւնը նաեւ առիթ կ'ըլլայ կարիքներուն իրագրելու դառնալու եւ մեր միաւորներուն հետ սուրիահայութեան օժանդակութեան նոր ծրագիրներ մշակելու:

«Գ.»- ՀՕՄ-ը կը հասնի հոն, ուր մեծ ժողովուրդի գաւազները կարիք ունին օժանդակութեան՝ Հայաստանէն Արցախ, Սուրիա, Լիբանան եւ այլուր: Արցախեան 44-օրեայ պատերազմէն ետք ՀՕՄ-ի Արցախի ծրագիրները որքանո՞վ ազդուեցան եւ ներկայիս ի՞նչ տարողութեամբ կը շարունակուին:

«Ն.Տ.»- Արցախի մեր գործունէութիւնը բաւական ազդուեցաւ: Այդ օրերուն ունէինք ութ մանկապարտեզ, այսօր կէս է միայն՝ չորս մանկապարտեզ, եւ դժբախտութիւնը այն է որ Շուշիի, Տոզի, Թաղերու եւ Զարեկայի մէջ մեր մանկապարտեզները որեւէ փամփուշտ կամ ազերի չտեսած յանձնուեցան թըշնամիին: Մնացեալ մանկապարտեզները, սակայն, բաւական գործուն են: Ունինք 250-է ավելի աշակերտներ՝ Ստեփանակերտ, Աշան, Ակնաբերդ եւ Խնձորիստան: Այս չորս մանկապարտեզները կը գործեն ամեն օր, ինչպէս կը գործէին պատերազմէն առաջ: Ներկայիս նաեւ աշակերտներու թիւի աճ կայ: Կեդրոնական Վարչութիւնը որոշած է նուազագոյնը վերջին երկու տարին անվճար դարձնել փոքրիկներուն ուսումը: ՀՕՄ-ի Արցախի մասնաճիւղը կայուն է եւ կը գործէ: Օգոստոս 2022-ին, երբ Աղաւնօ գիւղէն տեղահանուածներ կային եւ մաս մը բնակիչներ որոշեցին մնալ Արցախ, 10 հազար տղար օժանդակութեամբ օգտակար դարձանք իրենց: Իմ ամենափրած ծրագիրներէն մէկը «Արեւային Արցախ»-ի ծրագիրն է, որուն արդիւնքով արդէն իսկ 101 բնա-

կարանի վրայ տեղադրուած են Արեւային ջրատաքացուցիչներ՝ Մարտունի եւ Մարտակերտ շրջաններէն ներս, Նախ կարիքաւորներուն, որոնք կազմի գիծ չունին, ապա վիրաւոր զինուորներու եւ բազմանդամ ընտանիքներուն: Այս ձեւով կենցաղային նպաստ մը կը հայթայթենք ընտանիքներուն, որպէսզի տոկոս մնան մայրենի հողին վրայ:

Իսկ Հայաստան գաղթած կամ տեղահանուած արցախցիներուն ՀՕՄ-ի ընդհանուր ջանքերով մէկ միլիոն տոլարի նուիրատուութիւն տրամադրուեցաւ, այն պայմանով որ արցախցի վերադառնայ Արցախ եւ հոն շարունակէ բնակիլ: Անոր կողքին ունինք «Զինուորի Տուն» վերականգնողական ծրագիրը, որ իր սկիզբէն ի վեր՝ 2016-էն, մօտաւորապէս 5 միլիոն տոլարի ներդրում կատարած է:

ՀՕՄ-ը տարուէ տարի գանազան ծրագիրներով կը ներկայանայ, իսկ վերջին երկու տարուան ընթացքին մօտաւորապէս մէկ միլիոն տոլարէն ավելի օժանդակութիւն տուած ենք մեր վիրաւոր զինուորներուն, որպէսզի որակեալ բուժման ենթարկուին:

«Գ.»- ՀՕՄ-ը եղած է այն կազմակերպութիւնը, որ առանց վարանումի, հաւասարապէս ծառայած է եւ Սփիւռքին, եւ Հայաստանին, եւ Արցախին եւ Զաւախքին: Այս միասնութիւնը մարմնաւորողներէն մէկն է կամաւոր ծառայողներու հսկայ բանակ ունեցող ՀՕՄ-ը: Ի՞նչ բանի մէջ կը կայանայ այս միութեան անդու աշխատանքին գաղտնիքը: Մարդասիրական ծառայութեան փափա՞քն է պարզապէս, թէ ազգին ծառայելու ՀՕՄ-ուհիներու գիտակցութիւնն է նաեւ:

«Ն.Տ.»- Նախ մայրական գաղութներէն, թէեւ բոլոր ՀՕՄ-ուհիները մայրեր չեն, բայց նաեւ պատկանելիութեան գիտակցութիւնն է: Երբ ՀՕՄ-ի երդումը կ'ընեն, արդէն գիտեն որ բոլոր գաղութներուն, հայրենիքին ու Արցախին պիտի ծառայեն: Եթէ տեղ մը տազնապ կայ եւ Կեդրոնական Վարչութիւնը յայտարարութիւն կը հրապարակէ, գորակոչ կ'ուղղէ իր անդամներուն, մեր ընկերուհիները առաջին նուիրատուները կ'ըլլան: Ես որեւէ կազմակերպութեան մէջ նման նուիրեալ աշխատանք չեմ տեսած:

Աւելի հետաքրքրականը մեր թոշակառու ընկերուհիներն են, որոնք իրենց ամբողջ թոշակը կը տրամադրեն ՀՕՄ-ին, որպէսզի օգնեն ուրիշ հայրորդի մը: Այս է ՀՕՄ-ի գաղտնիքը:

«Գ.»- Զեր այցելութիւնը Հայկա ինչպիսի՞ տպաւորութեամբ կ'աւարտէք:

«Ն.Տ.»- Այս երկրորդ այցելութիւնս է Հայկա: Ծիշո՞ղ է որ պատերազմ անցուցած է երկիրը, սակայն մնացած է նոյն տաքուկ գաղութը: Իսկապէս հիացած եմ Հայկայի գաղութով: Մանաւանդ երբ այցելեցինք ՍՕԽ-ի ընկերաբժշկական կեդրոնը եւ նկատեցի ընկերուհիներուն աշխատելու եռանդն ու կամեցողութիւնը: Ազգային տարբեր հաստատութիւններ եւ կեդրոններ այցելելով ակաւատեցը դարձայ այն իրողութեան, որ ըլլալով Յեղասպանութենէն ճողոպրած հայ ընտանիքներ ընդունող ամենէն հին գաղութներէն մէկը, եթէ ոչ առաջինը, տեղւոյն հայութեան պահպանողականութիւնն ու տոկոսնութիւնը կառչելու այս գաղութին եւ պահպանելու մեր ունեցածը հիացմունքի արժանի են: Բոլորը կրնային լքել երկիրը, գաղթել, սակայն մնացին պատերազմի օրերուն եւ կը տոկան այս գաղութը կրկին ծաղկեցնելու համար:

Հարցազրոյցը վարեց
Չարմիկ Պողիկեան



ներուն «Տեր Մելքոնեան» սրահէն ներս հանրութեան ներկայացնելու մեր ծաւալուն աշխատանքը: Կարծեմ լիբանանահայութիւնը, իսկ առցանց սփռումներով հայութիւնը ընդհանրապէս, լաւապէս իրագրել դարձան ԴՅԴ-ի ուղեկից միութիւններու աշխատանքի լայն ծաւալին:

«Գ.»- Սուրիոյ պատերազմի ողջ տարիներուն, ՀՕՄ-ը իր բոլոր մասնաճիւղերով կանգնեցաւ սուրիահայութեան կողքին տարբեր ծրագիրներով: Ընտրի՞ս ՀՕՄ-ուհիներուն եւ Կեդրոնական

ԿԻՐՕ ՄԱՆՈՅԵԱՆ...

Սկզբը՝ էջ 1

Եւ դաշնակցականներու նուիրուածութիւնը հայոց պետականութեան կերտման նպատակին: Պետութիւն՝ որ առաջին օրուէն ինքզինք հռչակեց համայն հայութեան հայրենիք, իսկ 28 Մայիսի 1919-ին՝ Միացեալ Ռայաստան:

Ազգի պահպանման ու զարգացման գործին մէջ պետութեան կարեւորագոյն դերի գնահատման վկայութիւն է Դաշնակցութեան 2 Դեկտեմբեր 1920 թուականի որոշումը, որուն համաձայն՝ նախընտրելի էր, որ «պետութիւնը ըլլար կարմիր, քան՝ սեռած»:

Սփիւռքեան իր գործունէութեան շրջանին եւս, Դաշնակցութիւնը իր համակիր գանգուածներուն վարակեց անկախ Ռայաստանի գաղափարով, միաժամանակ ճիշդ գնահատելով խորհրդային Ռայաստանի դերակատարութիւնն ու արժէքը: Միշտ բարձր պահեց Եռագոյնով խորհրդանշուող այդ գաղափարը, մինչեւ որ այդ Եռագոյնը ծածանեցաւ իր իսկական հողին՝ հայրենի հողին վրայ:

Երեսուներկու տարի առաջ, Դաշնակցութիւնը պաշտօնապէս յայտարարեց այն ժամանակ դեռ խորհրդային Ռայաստանի եւ Արցախի մէջ իր կազմակերպական վերընձիւղման մասին: Ծիշդ է, այդ մասին որոշումը առնուած էր 1988-ին, իսկ աշխատանքները սկսած էին 1989-ին, բայց կազմակերպական ներկայութեան մասին պաշտօնական յայտարարութիւնը կատարուեցաւ 8 Օգոստոս 1990-ին:



Անցնող երեսուներկու տարիներուն, Դաշնակցութեան գործը Արցախի եւ Ռայաստանի Յանրապետութեան մէջ անցաւ շարք մը փուլերէ, որոնցմէ իւրաքանչիւրը նոր փորձառութիւն կուտակեց կուսակցութեան համար: Սկզբը, որպէս կազմակերպութիւն հայրենադարձող Դաշնակցութեան միակ սեւեռակետը Արցախի ազատագրումն էր: Եւ այդ գործը անելի դժուար կ'ըլլար, եթէ ըլլային այն հարիւրաւոր, հազարաւոր նուիրեալները, որոնք այդ օրերուն միացան Դաշնակցութեան շարքերուն եւ կամ անոր առաջնորդած պայքարին: Ծիշդ այնպէս ինչպէս 132 տարի առաջ, Դաշնակցութեան հիմնադրութեան օրերուն, այնպէս ալ հայրենի հողին վրայ մօտ վաթսու տարուան ակամայ բացակայութենէ վերջ՝ վերընձիւղման ժամանակ, արդէն գաղափարապէս եւ կազմակերպականօրէն ձեւաւորուած դաշնակցականներ կային, երբ տակաւին չկար դաշնակցական կազմակերպութիւն: Անոնցմէ շատերու կեանքին գինով է, որ հայրենի հողին մէջ Դաշնակցութեան ցանած սերմերուն աճը եղաւ շատ արագ եւ Արցախի մէջ ժողովուրդը արդէն 1991-ին իր վստահութեան քուէն տուաւ Դաշնակցութեան եւ ԶՅԴ-ն Լեռնային Ղարաբաղի Յանրապետութեան մէջ դարձաւ իշխանութիւն: Այդ շրջանին, Դաշնակցութիւնը չկրցաւ բաւարար չափով մասնակցիլ նորանկախ Ռայաստանի Յանրապետութեան մէջ պետականաշինութեան աշխատանքներուն:

1998-ի իշխանափոխութիւնը Դաշնակցութեան համար Ռայոնիքի մէջ գործելու նոր կարելիութիւններ տուաւ: 1999-ին, Դաշնակցութիւնը առաջին անգամ ըլլալով որպէս կուսակցութիւն մասնակցեցաւ արդէն ութ տարի առաջ վերանկախացած Ռայոնիքի մէջ խորհրդարանական ընտրութիւններուն:

Այնուհետեւ, երկրին սպառնացող ներքին ու արտաքին վտանգները միասնաբար դիմագրաւելու առաջադրանքով, Դաշնակցութիւնը տարբեր ժամանակներ, տարբեր ձեւաչափերով մաս կազմեց իշխանութեան:

Քաղաքական կոալիցիայէն դուրս գալու մասին ԶՅԴ Ռայաստանի Գերագոյն Մարմինի 27 Ապրիլի 2009-ի յայտարարութեամբ աւարտեցաւ տարբեր ձեւաչափերով իշխանութեան մաս կազմելու՝ Դաշնակցութեան շուրջ 10-ամեայ ժամանակահատուածը: Կուսակցութիւնը անելի քան եօթ տարի գործեց այլ պայմաններու մէջ՝ հանդէս գալով ընդդիմադիր դիրքերէ: 2016-ին, դարձեալ մաս կազմեցինք քաղաքական համաձայնական (coalition) կառավարութեան:

Ռայաստանի Յանրապետութեան մէջ որպէս ընդդիմադիր թէ որպէս համախոհական կառավարութեան մաս կուսակցութիւն, Ռայ Դատի բոլոր ուղղութիւններով աշխատանքներուն զուգահեռ, Դաշնակցութեան համար առաջնահերթութիւնները մնացին նոյնը:

Դաշնակցութիւնը յաջողեցաւ Ռայաստանի Յանրապետութեան քաղա-

քական գլխաւոր հարցը դարձնել սահմանադրական նոր բարեփոխումները, որոնց արդիւնքը եղաւ պետութիւնը օժտել խորհրդարանական կառավարման համակարգով, ուր ընտրական համակարգը կ'ըլլայ ազատ եւ արդար, եւ ժողովուրդը կարելիութիւն կ'ունենայ իր կամքը ընտրութեան միջոցով արտայայտելու:

Դաշնակցութիւնը պետական կառավարման այդ համակարգին ջատագովը եղած էր միշտ: Սակայն, մէկ բան է թուղթի վրայ փոփոխութիւն կատարելը, ուրիշ բան՝ այդ փոփոխութիւնները կեանքի կոչելը: Պիտի ընդունինք, որ առաջին օրէն իսկ, իշխող մեծամասնութիւն հանդիսացող կուսակցութիւնները ջանացին հնարաւորինս ձեւափոխել կառավարման համակարգը, այն պահելով մէկ անձի անմիջական ղեկավարութեան ենթակայ: Իսկ ներկայ իշխանութիւնը ընդհանրապէս աղճատեց այդ համակարգը, ուր այսօր խորհրդարանի մեծամասնութիւնը կը ղեկավարուի մենատիրական մօտեցումով, իսկ երկիրը՝ ամբողջատիրական, ուր ճիգ կայ գործադիր իշխանութեան կողմէ ղեկավարելու պետական կառավարման համակարգի օրէնսդիր եւ դատական իշխանութիւնները:

Անցնող տասնամեակներուն եղան բազմաթիւ զարգացումներ, որոնք վկայեցին այն մասին, որ Դաշնակցութեան իրական կշիռը Ռայաստանի Յանրապետութեան քաղաքական իրականութեան մէջ չէ սահմանափակուած Ազգային Ժողովին մէջ իր ունեցած տեղերով: Դաշնակցութեան իրական կշիռը շատ անելի է, որովհետեւ Դաշնակցութիւնը միակ քաղաքական ուժն է, որ կառոյց ունի նաեւ՝ Սփիւռքի տարածքին, ինչպէս նաեւ Ռայաստանի Յանրապետութենէն դուրս՝ հայրենի հողին այլ հատուածներուն վրայ, ներառեալ՝ Արցախի Յանրապետութեան:

Արցախի նկատմամբ Դաշնակցութեան ծրագրային, ռազմավարական եւ գործնական կեցուածքները Դաշնակցութեան համար եղած են վճռորոշ՝ ընդհանրապէս հայ քաղաքական իրականութենէն ներս, բայց յատկապէս՝ Ռայաստանի Յանրապետութեան քաղաքական դաշտին մէջ իր կեցուածքներուն համար:

Դաշնակցութիւնը ոչ միայն ձեռնարկեց եւ զարկ տուաւ Արցախի Յանրապետութեան միջազգային ճանաչում ապահովելու գործին, այլ նաեւ ազատագրուած տարածքներուն՝ իրաւապէս Արցախի Յանրապետութեան միացնելու եւ այդ տարածքները վերաբնակեցնելու գործին: Երկու ուղղութիւններով իր աշխատանքներուն մէջ, Դաշնակցութիւնը յաճախ հանդիպեցաւ Ռայաստանի Յանրապետութեան օրուան իշխանութիւններու դժկամութեան, իսկ վերջերս նաեւ՝ ներկայ իշխանութիւններու բացայայտ դաւադրութեան եւ թշնամանքին: Անոնց՝ «Արցախը տակը, որպէսզի Ռայաստանի մէջ հանգիստ ապրինք» մօտեցումն ու այդ ուղղութեամբ գործունէութիւնը իրականութեան մէջ նոր պատերազմներու եւ նոր պարտութիւններու ամենակարճ ճանապարհն է: Մենք ամենաշատը կը գիտակցինք խաղաղութեան կարեւորութեան՝ բայց այդ խաղաղութիւնը պէտք է ըլլայ արժանապատիւ խաղաղութիւն, որուն միակ գրաւականը մեր բանակի հզօրութիւնն է:

Թուարկեմ վերջին 30-35 տարիներուն ԶՅԴ-ի նախաձեռնութիւնները, որոնց առաջնահերթ նպատակը այդ պայքարի ճանապարհին նոր գաղափարներու եւ աշխատանքի սերմեր ցանելը եղած է:

- Ջաւախքի հայութեան խնդիրներուն եւ իրաւունքներուն գլխաւոր արծարծողը եղաւ Դաշնակցութիւնը: 20-25 տարի առաջ, երբ Սփիւռքի մէջ այդքան ալ տեղեակ չէին Ջաւախքի մասին, Դաշնակցութիւնը նախ գիրք ու քարտեզ տպեց մեր պատմական հայրենիքի այդ հատուածին եւ այնտեղ ապրող հայութեան տարատեսակ խնդիրներուն մասին: ԶՅԴ-ն էր, որ աշակցեցաւ, որպէսզի այդ խնդիրները հասցունին նաեւ Վրաստանի բարօրութեամբ շահագրգռուած պետութիւններուն ուշադրութեան, դառնան անոնց օրակարգի մաս: Պէտք է ընդունիլ, որ Ջաւախքի հայութեան խնդիրները այսօր համահայկական օրակարգի մաս կը կազմեն: Ջաւախքի հայկական ինքնութեան պահպանումը դաշնակցային կառոյցով Վրաստանի կազմին մէջ, կը բխին ոչ միայն Ջաւախքի հայութեան շահերէն, ոչ միայն Ռայաստանի Յանրապետութեան ազգային անվտանգութեան հրամայականներէն, այլ նաեւ Ռայաստան-Վրաստան եւ հայ-վրացական յարաբերութիւնները ամրապնդելու եւ խորացնելու անհրաժեշտութենէն:

- ԶՅԴ-ի միւս նախաձեռնութիւնը, որ նոյնպէս վարակիչ դարձաւ շատերուն համար եւ այսօր մաս կը կազմէ համահայկական օրակարգին՝ Արեւմտահայաստանի, Կիլիկիոյ եւ ընդհանրապէս Թուրքիոյ մէջ ապրող թաքուն, գաղտնի հայերու, յաճախ նաեւ հայկականութեան ինչ որ շառաւիղ ունեցողներու նկատմամբ հայ ժողովուրդին մօտ հետաքրքրութեան ստեղծումն է: Մէկ կողմէ դաւանափոխ հայերու շրջանակներուն մէջ առաջացած ինքնութեան փնտռումը, միւս կողմէ՝ այդ շրջանակներուն նկատմամբ հայութեան արդէն աճած հետաքրքրութիւնը ստեղծած են պարարտ հող, բոլորին համար, վերադառնալու իրենց ակունքներուն. ոմանք՝ դէպի հայրութիւն, ուրիշներ՝ դէպի Արեւմտահայաստան:

- Ռայոն Եղեգնապատեան համար հատուցումներու հարցը եւս կարեւոր չափով, - բայց ոչ միայն, - Դաշնակցութեան մէկուկէ տասնամեակի գործունէութեան շնորհիւ է, որ այսօր դարձած է համահայկական օրակարգի մաս: Մեծ Եղեգնի 100-րդ տարելիցին առիթով, 29 Յունուար 2015-ին հրապարակուած համահայկական հռչակագիրը կը խօսի հատուցման մասին եւ այդ տեսանկիւնէն կ'արժեւորէ «1920 թուականի Օգոստոսի 10-ի Մելրի հաշտութեան պայմանագիրը եւ 1920 թուականի Նոյեմբեր 22-ին՝ ԱՄՆ-ի Նախագահ Ուուոթո Ուիլսոնի Իրաւարար վճիռի դերը եւ նշանակութիւնը»:

Սկզբ՝ էջ 11

- Արցախի դեմ սանձազերծուած առաջին պատերազմին, 2016-ի քառորեայ պատերազմին եւ 2020-ի 44-օրեայ պատերազմին՝ Դաշնակցութիւնը իր կուսակցական եւ համակիր նուիրեալներով՝ անսակարկ նուիրուեցաւ հայրենի հողն ու հայ ժողովուրդին իրաւունքները պաշտպանելու պայքարին, տալով հարիւրաւոր գոհեր:

- Սուրիոյ մէջ, հայութեան անվտանգութիւնը հնարաւորինս ապահովելու նախաձեռնութիւն, որ մէկ կողմէ ըստ արժանւոյն գնահատուեցաւ Սուրիոյ պետութեան կողմէ, միւս կողմէ՝ ծնունդ տուաւ նոր նուիրեալներու՝ որոնք իրենց կեանքը տուին հայութեան իրաւունքներու եւ հայրենի հողին պաշտպանութեան համար՝ Գամիշլիէն մինչեւ Զալէպ, մինչեւ Արցախ:

- Զայաստանի այսօրուան իշխանութիւններուն՝ սկիզբը աջակցելու, ապա՝ սանձելու եւ ազգային ճիշդ ուղի վերադարձնելու պայքարը եւս սկսաւ Դաշնակցութիւնը, 2019-ի Մայիսին կազմակերպելով 2018-ի Մայիսեան իշխանափոխութենէն ետք առաջին հանրահաւաքը:

- Այսօր եւս, Զայաստանի ներկայ իշխանութիւններուն՝ Արցախը Ատորպեյճանի կազմին վերադարձնելու եւ Զայաստանի Զանրապետութիւնը թուրք-ատորպեյճանական համաթուրանական ծրագիրներու իրականացման առջեւ բանալու քաղաքականութեան դեմ «Ազգային փրկութեան» եւ «Դիմադրութեան» շարժումներուն մէջ առանցքային է Դաշնակցութեան դերակատարութիւնը: Այս շարժումներուն նպատակն է կասեցնել Արցախը հայաթափելու եւ Զայաստանը թրջացնելու քաղաքականութիւնը: Այդ կասեցումը իրականացնելու հիմնական ճանապարհը ներկայ իշխանութիւններուն, յատկապէս վարչապետի պաշտօնը վարողին փոխարինումն է ազգային գաղափարախօսութեամբ, տեսլականով ու նպատակներով առաջնորդուող մարդոց մով եւ իշխանութեամբ, անկախ անկէ, որ Դաշնակցութիւնը այդ իշխանութեան մաս կը կազմէ կամ ոչ:

- Այսօր, Զայաստանի Զանրապետութեան Ազգային ժողովին մէջ, դաշնակցականներու թիւը 13 է, թիւով երկրորդ քաղաքական կուսակցութիւնը:

Այս բոլորէն անկախ, դեռ չեմ խօսիր Դաշնակցութեան արդէն «սովորական» դարձած աշխատանքներուն մասին. մամուլ ու լրատուամիջոցներէն, մինչեւ Զայ Դատի յանձնախումբեր եւ գրասենեակներ, այլ պետութիւններու քաղաքական կուսակցութիւններու եւ միջազգային կազմակերպութիւններու հետ յարաբերութիւններ, եւ երբեմն նաեւ՝ համագործակցութիւն:

Այս ամբողջը իսկապէս Զայ Յեղափոխական Դաշնակցութիւնը կը վերածեն սոսկ քաղաքական կուսակցութենէն՝ աւելիին:

Դաշնակցութեան այս գործունէութիւնը ոմանք կրնան նկատել որպէս կուսակցութեան մը բնական աշխատանքները: Սակայն, իրականութեան մէջ, իր համահայկական աշխարհահայեացքով եւ նպատակներով, իր աշխարհասփիւռ կառուցով Դաշնակցութիւնը աւելին է քան պարզապէս կուսակցութիւն, եւ այս է այն հիմնական տարբերութիւնը, որ կայ ԶԳԴ-ի եւ հայ իրականութեան մէջ գործող մնացած բոլոր քաղաքական կուսակցութիւններուն միջեւ:

Դաշնակցութեան համար անընդունելի է արհեստական մօտեցում է ազգն ու պետութիւնը իրար հակադրելը, անկախ անկէ թէ այդ հակադրութիւնը ո՞ր կողմէն կը կատարուի: Զայրենի պետութեան կողմէ որեւէ կեցուածք, ազգային ուղեգիծով կեցուածք, չի կրնար անտեսել ամբողջ ազգին շահը. իսկ ազգին շահին մասին խօսելու ժամանակ, կարելի չէ անտեսել հայրենի պետութեան գոյութեան կենսական նշանակութիւնը ազգի գոյատեւման համար: Այլ խօսքով, ազգային շահը՝ նոյն պետական շահն է եւ՝ փոխադարձաբար:

Ահա այս հասկացողութեամբ է, որ Դաշնակցութիւնը հետամուտ է ամրապնդել Սփիւռքի ազգային ինքնութիւնը եւ կազմակերպել անոր քաղաքական դերակատարութիւնը՝ անոր կարողականութիւնները ուղղելու համար դէպի Զայաստանի պետականութեան հզօրացում եւ Զայ Դատի հետապնդում:

Դաշնակցութեան համար Մերձաւոր եւ Միջին Արեւելքի հայրենամերձ համայնքները ունին ռազմավարական կարեւորութիւն, այդ պատճառով ալ Դաշնակցութիւնը միշտ յատուկ հոգածութեան առարկայ դարձուցած է այդ համայնքները:

Այս հոգածութեան արտայայտութիւնն է Դաշնակցութեան կեցուածքը Սուրիոյ հայ համայնքին նկատմամբ: Դաշնակցութեան համար առաջնահերթ են Սուրիոյ մէջ գտնուող հայութեան անվտանգութեան եւ գոյութեան պահպանումն ու զարգացումը:

Աշխարհը կ'ապրի հաղորդակցական միջոցներու գարգացման հետեւանքով ստեղծուած ընկերային նոր պայմաններու մէջ, որոնք մեծաւ մասամբ կը դրսեւորուին ընկերային ցանցերու վրայ: Այդ ցանցերուն հասանելիութիւնն ունեցող իւրաքանչիւր ոք՝ արտայայտուած կարծիքներու թէ՛ սպառնող է եւ թէ՛ հեղինակ: Ո՛վ ի՛նչ ուզէ կը գրէ այդ ընկերային ցանցերուն վրայ: Իրաւ, սո՛ւտ՝ անվերահսկելի է: Բնականաբար, այս երեւոյթները նաեւ առկայ են մեր՝ հայկական իրականութեան մէջ: Այս պարագային հարցը աւելի խնդրայարոյց, նոյնիսկ վտանգաւոր է, երբ քու հայրենի իշխանութիւնը գումար կը ծախսէ, կը դիմէ կեղծ (fake) օգտատէրերու միջոցով, սխալ ու սուտ լուր տարածելու գործին՝ ազդելու համար հանրային կարծիքին վրայ: Եւ իրենց նպատակը՝ ժողովուրդին արժեհամակարգը այլասեռել է, ազգային գաղափարն է ուղիէն հեռացնել է, պայքարի ոգին կոտրել է: Եւ ցաւօք պետք է ընդունիլ, որ անոնք որոշ չափով հասած են յաջողութեան,

մանաւանդ 2020-ի 44-օրեայ պատերազմի ահաւոր պարտութենէն ետք, որ ինքնին յուսահատութեան ալիք բարձրացուց ժողովուրդին մօտ:

Մեզի՝ դաշնակցականներու, Դաշնակցութեան համակիրներուն համար հպարտութիւն է Դաշնակցութեան երկարակեցութիւնը, 132 տարուան գործունէայ գոյութիւնը: Մեր ազգի պատմութեան անցնող 132 տարիներուն բոլոր կարեւոր իրադարձութիւններուն մասնակից, երբեմն նաեւ առաջնորդ եղած ըլլալը: Բայց պիտի ընդունինք, որ բոլորին, բոլոր հայերուն համար այդպէս չէ: Ընդհակառակը, մանաւանդ երբ անցնող տասնամեակին աշխարհի մէջ ալիք առաւ ամբոխահաճութիւնը (populism), որ սկզբնական շրջանին յատկանշուեցաւ կայացած համակարգերու (establishment) դէմ դրսեւորումներով, նա՛խ հայրենիքի, ապա Սփիւռքի մէջ նոր տեսակի հակադաշնակցականութիւնն առաջ եկաւ: Նախ հայրենիքի՝ որովհետեւ այնտեղ խորհրդային եօթնասուն տարուան ընթացքին կանգ չէր առած Դաշնակցութեան դէմ պայքարը. վերանկախացած Զայաստանի Զանրապետութեան մէջ այդ պայքարը շարունակուեցաւ օրուան իշխանութիւններուն կողմէ: Այդ իշխանութիւններուն ապագային գաղափարախօսութիւնը Դաշնակցութեան նկատմամբ ունեցաւ նոյն համայնավարական, խորհրդային կեցուածքը: Զետագային ալ, Դաշնակցութեան դէմ կարգ մը քաղաքական ուժեր պայքարը շարունակեցին, ոմանք դեռ եւս կը շարունակեն, աւելի «մեղմ» ձեւով, ցուցադրելով խորհրդային օրերուն պատրաստուած ֆիլմեր: Սակայն, այսօր գործող իշխանութիւնները այդ գաղափարական պայքարին վրայ աւելցուցին նաեւ քաղաքական պայքարը, նոյնիսկ՝ հալածանքը: Անոնք համար Դաշնակցութիւնը նախ եւ առաջ քաղաքական մրցակից է ամէն տեղ, երկրէն ներս եւ դուրս, հետեւաբար Դաշնակցութեան հարուածելու, գայն տկարացնելու ամէն միջոց ընդունելի է այս իշխանութիւններուն համար: Այս ամբողջի հիման վրայ, նաեւ որոշ սփիւռքեան երեւոյթներ դրդապատճառ ունենալով, Սփիւռքի մէջ եւս յառաջացած է հակադաշնակցական պայքարի նոր երեւոյթ մը, որ երբեմն կ'արտայայտուի կայացած կառույցներէն դուրս նոր խմբաւորումներ, նոր կազմակերպութիւններ յառաջացնելու անմեղ մօտեցումներով, բայց իրականութեան մէջ կը ջանայ այդ «նորը» ձեւաւորել՝ օգտուելով «հին»-ին ստեղծած կարելիութիւններէն: Այս չի նշանակեր, որ ԶԳԴ-ն ու իր գործունէութիւնը անթերի են, բայց մէկ բան է այդ թերութիւնները սրբազրելու նպատակով կատարուած քնննադատութիւնը, այլ բան՝ այդ թերութիւնը որպէս խոցելի կետ՝ հարուածելով Դաշնակցութիւնը տկարացնելու գործունէութիւնը:

44-օրեայ պատերազմի ահաւոր կորուստներէն ետք, յաճախ մտածած եմ դաշնակցական այն սերունդին մասին, որ 1921-ի Ապրիլին ստիպուած եղաւ դուրս գալ իր վերականգնած հայկական պետականութենէն: Այդ սերունդը կրցաւ Յեղասպանութենէն ետք հասցուած այդ ծանր հարուածէն ետք դուրս գալ եւ իր առաջնորդութեամբ դուրս բերել նաեւ ժողովուրդը եւ գայն առաջնորդել դէպի նպատակաւորուած պայքար:

Այսօր իսկապէս, որ շատ են մեր դիմագրաւած վտանգներն ու մարտահրաւերները: Անոնք բազմատեսակ են: Երբեմն նոյնիսկ՝ անյաղթահարելի թուացող:

Այսօր ծանր է, շատ ծանր է Զայրենիքի՝ Զայաստանի եւ Արցախի հանրապետութիւններու իրավիճակը: Թշնամիները նոյնն են՝ Թուրքիան եւ Ատորպեյճանը, եւ երկուքին հետ տարբեր չափերով մեղսակից են այլ պետութիւններ, որոնք բնականաբար կը փորձեն շարժիլ ըստ իրենց ազգային պետական շահերուն: Տարբերութիւնն այն է, որ այսօրուան Զայաստանի Զանրապետութեան իշխանութիւնները եւս մեղսակից են մեր թշնամիներու ծրագիրներու իրականացման գործընթացներուն:

Զայ Յեղափոխական Դաշնակցութեան օրը ունի նաեւ մէկ այլ, իւրայատուկ խորհուրդ. այսօրուան նշումը մեր ուխտը, դէպի Ազատ, Անկախ եւ Միացեալ Զայաստան հասնելու ուխտը վերանորոգելու առիթ է: Մենք այդ ուխտի վերանորոգման կարիք ունինք յատկապէս պարտութիւններու ժամանակ: Այնպիսի պարտութիւններ, որոնք փորձանքէն մենք անցանք վերջերս եւ որոնք կը դիմագրաւենք այսօր եւս: Յատկապէս դուք՝ որպէս այս երկրի՝ Սուրիոյ քաղաքացիներ ու բնակիչներ, լաւագոյնս կը հասկնաք պարտութիւնները, այդ պարտութիւններու պատճառած հիասթափութիւնն ու յուսախաբութիւնը յաղթահարելու կարեւորութիւնը: Այդ վիճակը յաղթահարելու երկու միջոց կայ. պայքարիլ եւ այդ պայքարը դարձնել յարատեւ: Անցնող 132 տարիներու պատմութիւնը վկայ՝ մեր ժողովուրդը շատ աւելի ծանր ու դժուարին օրեր կրցած է յաղթահարել, շատ աւելի նուազ կարելիութիւններով:

Զակառակ այսօրուան ծանր պայմաններուն, մենք պետք է շարունակենք պայքարը, հաւատարիմ մնալով Զրիստափոր Միքայելեանի այս պատգամին.

«Յարատեւ կռիւ, – յաճախ եւ երկար ժամանակ, գուցէ անյաջող, չնայած երբեմն նոյնիսկ իր լայն ծաւալին, – ահա թէ ուր է մեր փրկութեան բանալին: Պահպանենք, շարունակենք կռիւը, որպէսզի լայնանայ, ընդարձակուի եւ ընդարձակուելով յարատեւի, ահա դէպի մեր նպատակը տանող միակ ճանապարհը: Չշեղուենք այդ ճանապարհից, որ սփռուած է յուսատու ապագայի գրաւիչ ծաղիկներով»:

«Ահա այս մօտեցումով է, որ այսօրուան մեր կարելիութիւնները, մեր բոլոր թերութիւններով եւ վտանգներով հանդերձ, մեզի կու տան հիմք, որ եթէ մեզ մէ իւրաքանչիւրը իր մասնակցութիւնը բերէ հայութեան իղձերու իրականացման պայքարին՝ անպայման կը հասնինք մեր նպատակին: Անպայման կը հասնինք Ազատ, Անկախ եւ Միացեալ Զայաստանին. Մենք չտեսնենք մեր յաջորդները կը տեսնեն»:

«ՍՓԻՒՌԸ»... ՊԵՏԻԿԵԱՆԻ ՔԱԶՎԱՍՏԱԿ ԿԱՏՈՐԸ



Դոկտ. Արամ Սարգսյան

Վերջին տասնամյակներում, տպագիր գիրքերու ամենազարգացած ընթացքը ստեղծելու համար, ոչ միայն ակադեմիկոսներն ենք, այլ բարեկարգ օգտագործողներն ենք առցանց, էլեկտրոնային թուայնացած արհեստագիտության օժանդակությամբ հայերեն բազմաթիվ գիրքերու:

21-րդ դարու հաղորդակցական տարաբնույթ սարքերը, համակարգիչներն մինչև բջիջային հեռախօսները անընդմեջ կը դարձնեն տպագիր հրատարակությունները: Բայց եւ այնպէս հայ իրականութեան առջեւ բացուող հաղորդակցական հսկայ կարելիութիւններու պարտադրող ազդեցութեան հետ համակերպելով, համակարգիչի պատահաբան առջեւ նստած, կը վայելենք թուային արհեստագիտութեան բազմօգուտ եւ հաճելի կիրառումը, համացանցի տարբեր հարթակներու վրայ թուային գիրքերու միջոցով մեր ոսկեղնիկին հետ դարձեալ գլուխ-գլխի գալով, համակ եւ յօժարակամ նուիրումով կ'ըմբռնանք մեր գեղարարական լեզուի խոհեմնազ գեղեցկութիւնը:

Այս պարագային հայերեն գիրքի մը թուայնացած օրինակ մը ստանալը իմ առաջին փորձս է, ամենօրեայ իմ աշխատանքի ընթացքին մէկ մասնիկն է: Ընդհանրապէս մտաւորական տպագիր նոր հատորով մը յարգարէ գրադարանիս առջեւ դարձնելով, ուր պիտի փորձէր գտնել իր պատուոյ տեղը:

Բայց այս անգամ ամենազարգացած թուայնացած գիրքի մը օրինակը ստանալու աննշան մտահոգութիւնս իսկ չէր: Դեմ յանդիման էի «Սփիւռքը» միայնակ բառով գիրքի խորագիրին հետ, որուն էլեկտրոնային տարբերակը ստացած էի հեղինակէն, մեր սիրելի մտաւորական՝ Գեորգ Պետիկեանէն:

Հետաքրքրութեանս գլխաւոր նիւթերէն մին հանդիսացող խրթնայայտ «Սփիւռք»-ն է, մեր ազգի համար այնքան կնճռոտ, տագնապալարոյց, հոգեխոցի համագոր եւ համայն ժամանակներու համար ահագանգերով յագ ու վճռական, որ տակաւին կը մնայ աղերսահայց եւ բազմակողմանի ուսումնասիրութեան կարօտ:

Փակագիծ մը բանալու համար, ժամանակի արագընթաց շուկայով եւ սփիւռքահայուն ակնկալութիւնները գոհացնող նորաստեղծ լուրջ պարբերականի մը, բաւարարող հարթակի մը հարկաւորութիւնը ներկայիս զգալի է, նոյնիսկ առցանց համապարփակով՝ «ՀԱՅ ՍՓԻՒՐԸ» կամ «ՍՓԻՒՐԸ» վերնագրով, Սփիւռքի ձայնը հանդիսացող պարունակով, իբրեւ նոր հիմնադրամը: Նման նախաձեռնութիւն մը գործնական խօսուս արտայայտիչը պիտի ըլլայ հայ Սփիւռքի կառոյցներ

րու, հայկական համայնքներու գաւազան միաւորներու՝ միասնական, հաւաքական ու համատեղ գործունեութեան, ոչ միայն իբրեւ համահայկական տագնապները արտայայտող, մարտահրաւերները արձագանգող, այլեւ դառնալու գործնա-



կան ու հեռատես ռազմավարութեան առաջնահերթութիւն մը, մեր ներուժը համախմբելու, համագործակցութեան հարթակներ ստեղծելու, հայ մտաւորականներու փառանքները համախմբելու, գերանհրաժեշտ օրակարգերու, հիմնական ծրագիրներու շուրջ, որ կը կոչուին Սփիւռքի գոյառումի գերխնդիրներ: Բայց այդ մէկը երեւի մեր հաւաքական ակնկալութիւններէն հեռու է: Կարելի՞ է այդ ակնկալութիւնը փոխարինել անհատի մը, մտաւորականի մը կողմէ «Սփիւռքը» վերնագրով պարկեշտ հատորի մը հրատարակութեամբ: Փակեցնել փակագիծը եւ վերադառնալ մեր նիւթին:

Գեորգ Պետիկեանի «Սփիւռքը»-ը արգասիքն է հայօրէն մտածող, զգացող եւ գործող, յիսունէ աւելի տարիներու իր մտաւորական փորձառութեամբ, հայ լեզուի ու մտքի հանրածանօթ մշակ, երկարամեայ տնօրէն եւ կրթական վաստակաշատ դաստիարակ, գրական բեղուն վաստակ ունեցող ու ազգային գործիչ եւ հայ մամուլի անխնայ աշխատակիցին մտքերուն: Անակնկալ մը չէն նաեւ Սփիւռքի եւ սփիւռքահայութեան տագնապները ամենօրեայ դողանքներու նման հնչեցնող, սթափեցնող, ազգային արմատներուն թափանցելու եւ կառչելու խրթնութիւնը իր զիտարկումները, հրապարակաստանները:

Պայծառատեսիլ եւ լուսամիտ հայու կերպարով ներշնչուելու, ապրելու իր խանդավառող գրութիւնները, ուր ընթերցողին համար այնքան թելադրող են, իրենց տողատակի պարունակով՝ հոգատար ու հըսկողական, գրական ամենազարգացած խորհուրդ: Սպասելի էր, հայապահպանման ամենօրեայ սուր ու անհաւասար պայքարը իրը դարձնուցած

յանձնառու նման մտաւորականի մը կողմէ «Սփիւռքը» վերնագրով քաջիմաստ գիրք մը գրելու յղացումը կամ դրողումը:

Կարելի է հարց տալ, թէ ինչո՞ւ այս խորագիրը: Ի՞նչ կը պատգամէ այս մտախոհ վերնագիրը, եւ ի՞նչ կը ներշնչէ անոր բովանդակութիւնը: Արդե՞օք հեղինակը կարիքը ունէր տասնամեակներ սպասելու Արամ Ա վեհափառի՝ 2022-ը «Սփիւռքի Տարի» հռչակելու պատգամին ու անոր յորդորող խորհուրդին: Բնական է, որ այս գիրքին մէջ գրուած ենթախորագիրներէն մէկը արձագանգած է այդ կոչին: Բայց պահ մը կարելի է կռահել թէ հեղինակը ի՞նչ պիտի պատասխանէ թէ նման վերելիշուած հարցումները ուղղուին իրեն, մանաւանդ, որ ինք իր յօդուածներէն մէկուն խորագիրն իսկ ընտրած է՝ Շատերու քիչ «Ճանօթ» եւ նոյնքան ալ «Անձանօթ» Սփիւռքը: Բայց ի՞նչ լուծումներ, ինչպիսի՞ք լքեր կ'առաջարկէ ժամանակակից հայ «Սփիւռք» կոչուած խրթնայայտ առեղծուածին, հայ Սփիւռքի խուճապուտ իրականութեան, գոյարու մին, սերնդափոխութեան, նոր սերունդի շահագրգռուածութիւնը, պատրաստակամութիւնը բարձր պահելու վճռական պահերով լեցուն մեր մարտահրաւերներուն դիմաց:

Ահա թէ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս իրաքանչիւր մտածող միտք կը դիմէ իր գրիչին եւ գրիչը ամուր սեղմած կը հետեւի իր մտածումներով սնանող անոր տողանցքին: Գ. Պետիկեան հեղինակը հաճելի բարեխառնութեամբ, երբեմն խրախուսող ու համոզող, երբեմն ալ այպանական ու հեգնական մեկնաբանութեամբ բնութագրած է իր մտարթուն մտորումները, սրամիտ պատասխանները: Իր մտաւորակարգը կը յայտնուի բազմատասնեակ իր յօդուածներու վերնագիրներով եւ անոնց բովանդակութիւններով ու մանաւանդ իր հրապարակած տասնեակ մը գիրքերով՝ «Մայթերու Անցորդը» (հրատարակուած 1997), «Անգոյն Տերեւներ» (2001), «Գրադարանս» (2004), «Բարեւ Հալէպ» (2007), «Դիմատետրս» (2011), «Պապիկը Կարդալ Զի Գիտեր» (2015), «Սա Մեր Բոլորին Հալէպն է» (2017), «Ես Տեսայ Անին» (2019), «Տարին, որ Անցաւ» (2021), «Սփիւռքը» (2022), որոնց կողքին հրապարակած է գրական երկեր, երկուքական արարներով ներկայացուած թատերգութիւններ:

Գ. Պետիկեան, սփիւռքեան շուրջընդիր իր դեգերումներու քառուղին բոլորած է անցնելով իր թագաշուք ծննդավայր Հալէպէն, հայկերտումի լուսասնունդ դարպասէն՝ Ազգային Քարէն Եփիէ Ճեմարանէն: Այս առիթով հեղինակը լայնօրէն բացած է իր յիշողութեան պատուհանները եւ յիշատակներու արկղերը, ուր ամբարած է իր յուշերը: Այդ բոլորը ընթերցողին համար միայն լուսանկարներ չեն այլ վառվառն շարժանկարներ: Ան ճեմարանի մէջ սնանած է գիր, գրականութիւն, ազգային բարձր կրթութիւն, առողջ հայրենասիրութիւն, զօտեպնդուած է ազգային կամքի գարունագեղ երազներով, թեկուզ անցնելով այդ կրթական օճախին անցեալի թիթեղեայ կամ քարէ եր-

դիքներուն տակէն:

Իրերայաջորդ տարիներով եւ միաժամանակ հայագիտական իր ճաշակած սնունդով փայլալայած է խրովահեղ ազգային եւ հայատրոփ գրական-մշակութային ներշնչանքով ինքնամշակուած փառագուարձ Պէյրութէն: Այդ գիտելիքներն ու փորձառութիւնը դարձեալ կուտակած է իր հոգեմտաւոր արկղներուն մէջ, եւ ապա հասնելով բազմաժամ, բայց միաժամանակ բազմաժողով մտերիկայի Միացեալ Նահանգներ, հաստատուած է Կլեմտոն Քաղաքին մէջ 1980-ին, ուր արդէն հասած է իր գրական եւ ստեղծագործական վերարտադրութեան պատեհ ժամանակը:

«Սփիւռքը» վերնագրով հատորը խտացուած է 208 էջերու մէջ: Գեղեցիկ ու անմիջական պատումներով հատորը լոյս տեսած է ԱՄՆ-ի մէջ, Միտ Տեր Յովհաննեսեանի մեկնաստեղծութեամբ իր վաղամեռիկ տիկնոջ՝ Հանգուցեալ Սարթիկ Սապունճեան-Տեր Յովհաննեսեանի քաղցր յիշատակին: Հատորին խմբագիրն է Դոկտ. Ալիս Զրիւմեան: Հեղինակը «Սփիւռքը» հատորը ձուլած է այս տարի գուգադիպող Հալէպի Ազգային Քարէն Եփիէ Ճեմարանի հիմնադրութեան 75-ամեակին:

Հայաշխարհի իրավիճակին եւ մանաւանդ սփիւռքահայու խոհերուն լաւատեղեակ ու խռովներուն քաջածանօթ հեղինակը աղերսահայց հենք մը ունի: Յիսուսի բարեւտուող գրական բարեճաշակ իր գրութիւններուն ամէն մէկ համեմուած եւ սրտախօսիկ ենթախորագրին մէջ, ինչպէս՝ «Աւարայրն ու նոր Աւարայրները», «Հիմնաստեղծութեան Եականները», «Մեզի եւ իրենց» եւ այլն, ընթերցողը մագնիսացած կը դարձնէ իր հաճելի պատումներուն: Պետիկեան հայ Սփիւռքի տագնապները ապրող մըն է իր պատումներուն մէջ, համբերատար է հայը որոնող իր դեգերումներուն մէջ: Հեղինակը լաւապէս գիտնալով, որ կարելի է իբրեւ հալէպահայ, սփիւռքահայ թէ ամերիկահայ ըլլալ, սակայն երբեք միտքէն չէր անցուցած հայու նոր տեսակին՝ ֆէյսպուքահայի կերպարին մասին, որուն հայ ինքնութիւնը ենթակալ է աղօտելու վտանգին, մանաւանդ անդէմ ու անդիմագիծ ինքնութեամբ հաւաքականութեան մէկ մասնիկը դառնալու կամ դիմակայելու տագնապին: Հեղինակը լաւապէս գիտնալով, որ ժամանակը սփիւռքահայուն եւ բոլորիս համար ալ քմահաճ, անողոք եւ անզիչող է, բայց եւ այնպէս ան լաւատես սպասող մըն է, իսկ արդարացումներ փնտրող մըն չէ, գործին հաւատացող մըն է եւ անտրամադիր է հաշտուելու անըմբռնելիին հետ, որով ո՛չ ոք գիտէ, թէ վաղուան լոյսին հետ ի՞նչ ուրուականներ պիտի ծնին:

Չինք լաւապէս ճանչնալու, ընկալելու համար պէտք է մտնել հայու իր մորթին տակ, նախապայման է լսելու անոր հոգիի թրթռոցը: Հաւատացող մըն է, որ կենսունակ եւ հայեցի Սփիւռքը հայրենիքին ալ լոյս եւ ուժ կը ներշնչէ: Լաւատեղեակ ըլլալով, որ այդ մէկը կը պահանջէ հայու սպանացող հոսանքներուն դէմ նաւարկելու, ուր պէտք է գիտնալ

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



Խոյ

Նոր համագործակցություններ սկսելու հիանալի շրջան է: Ձեզմե մեծ ջանքեր չեն պահանջուի յաջողության հասնելու համար:



Ցուլ

Ձեր գործընկերներուն հետ երբեմն խնդիրներ կը յառաջանան, բայց փոխգիշուամներու շնորհիւ անոնք կրնան դիւրութեամբ լուծուիլ:



Երկուորեակ

Ձեր առողջութեան պէտք է ուշադրութիւն դարձնէք: Փորձեցէ՛ք ձեր ծանրաբեռնուած վիճակը այս շաբաթ նուազագոյնի հասցնել:



Խեցգետին

Բարեյաջող շաբաթ է մարդոց հետ նոր յարաբերութիւններ մշակելու: Սիրային գետնի վրայ յաջող զարգացումներ տեղի պիտի ունենան:



Առիւծ

Համարձակութեամբ նոր գործեր ձեռնարկեցէ՛ք: Ձեր հեղինակութիւնը պիտի փաստէք եւ մարդոց ուշադրութիւնը գրաւէք:



Կոյս

Խուսափեցէ՛ք խոշոր գնումներ կատարելէ: Ստեղծագործական գործունեութիւն ծաւալելու ցանկութիւնը ունիք: Աւելի խելամտօրէն վարուեցէ՛ք ձեր շուրջիներուն հետ:



Կշիռք

Մտերիմ բարեկամներու հետ հաճելի ժամանակ պիտի անցընէք այս շաբաթ: Անձնական հարցերու մէջ ձեր որոշումները շուտով պիտի իրագործուին:



Կարիճ

Անհրաժեշտ է, որ խուսափիք անհպարտելի ձեզ մտահոգող հարցերուն լուծում մը գտնելու համար: Ձեր սեփական գործերով զբաղեցէ՛ք եւ մեծ յաջողութիւն պիտի գտնէք:



Աղեղնաւոր

Այս շաբաթ կը յաջողիք լեզու գտնել ձեր շրջապատին հետ: Ձեր այս ունակութիւնը շատերուն վրայ լաւ տպաւորութիւն պիտի ձգէ:



Այծեղջիւր

Համբերատարութեամբ պիտի կարենաք ամբողջացնել ձեզի վրստահուած գործերը: Կարճ ճամբորդութիւն մըն ալ նախատեսուած է ձեզի:



Ձրիս

Կարճ հանգիստի մը կարիքը ունիք: Պիտի յաջողիք խուսափիլ որոշ մարդոց չար հայեացքներէն, որոնք կը խանգարեն ձեզ: Յաջողութեան դափնեպսակը պիտի կրէք վերջապէս:



Ձուկ

Դուք կրնաք ոգեշնչել ու երջանկացնել այն մարդոց, որոնք յուսահատութեան մատնուած են: Լաւատես եք եւ շատեր կը փափաքին ձեր հետ մօտեն ծանօթանալ:



ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ԳՐՈՂՆԵՐ ԻՆՉ ԳՐԱԾ ԵՆ ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՍԻՆ

Հայ արուեստի պատմութեան մէջ դժուար է գտնել այնպիսի գործիչ, որուն կերպարով ներշնչուած ըլլան դարու գրեթէ բոլոր գրողներն ու բանաստեղծները: Թերեւս այդ երանելիներէն է հայ հանճարեղ երգահան Կոմիտասը:

Անոր մասին գրուած են թէ՛ փոքրիկ բանաստեղծութիւններ, թէ՛ պոեմներ ու ծաւալուն երկեր: Երգահանի ծննդեան 80-ամեակին առիթով հիասքանչ ստեղծագործութիւն գրած է հայ մեծանուն բանաստեղծ Պարոյր Սեւակը:

1956-ին կը ծնի բանաստեղծութեան այն հատուածը, որ հետագային կը դառնայ հանրայայտ «Անլռելի Չանգակատան» բնաբանը: 1959-ին Կոմիտասին նուիրուած առաջին բանաստեղծութեան ստեղծումէն 10 տարի անց, Պ. Սեւակ կ'աւարտէ վերոնշեալ իր գլուխգործոցը, որ այսօր ալ կը համարուի Կոմիտասին նուիրուած ամենավառ գործերէն մէկը: «Անլռելի Չանգակատունը» կը բաժնուի դողանջներու. առաջինը կը կոչուի «Ղօղանջ Աւետիսի»:

**Հագար ութ հարիւր վաթսուներեք թուին
Հայոց այգիներն ի՞նչ պտուղ տուին.
Հայոց արտերում ի՞նչ բերք էր հասել, -
Դժուար է ասել...
Միեւնոյն թուին, Լոռուց շատ հեռու՝
Անատոլուի խաւար խորքերում**

**Մէկ ուրիշ մանուկ լոյս աշխարհ եկաւ:
Մինչ հայրը նրա՝ Գեւոն կօշկակար,
Գոգնոցը հանեց, արխալուղ հագաւ,
Հարեան-դրկից՝ մի-մի շիշ օղով՝
Նրա տուն մտան՝ աչքալուսանքի:**

Մէկ հատուած ալ «Ղօղանջ Օծման»-էն.

**Նա բանաստեղծ էր
Ու երգաստեղծ էր
Նա ունէր վառ ձայն
Ու նուազման ձիւղ...
Եւ սակայն ոչ ոք
Հայոց հինաւուրց կաթողիկոսի անունը երբեք
Ո՛չ ստացել էր որպէս թանկ ընծայ,
Ո՛չ էլ գողացել:
Եւ հիմա - յանկա՛րծ - հայոց նորընծայ
Երկրորդ Կոմիտաս,
Որ Հայրապետի
Անունը պիտի
Ամենայն ինչում
Տա նոր մի հնչում,
Սուրբ յիշատակը մշտավառ պահի:**



ԵՐԱԾՇՏՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Երաժշտութիւնը նշանակալից դեր ունի դաստիարակութեան մէջ, այնպէս ինչպէս արուեստը ընդհանրապէս: Մեր վարժարաններէն թէ բնակարաններէն ներս հարկ է մեր պատանիներուն լսել տալ Կոմիտասի, Կանաչեանի, Սայաթ Նովայի եւ այլ երաժիշտներու երգերն ու երաժշտութիւնը, անոնց հոգիները հարստացնելու հայ մշակոյթին գոհարներով:

Այստեղ կը մշտեցնենք Պիլերիան Մարիի «ԿԻՆԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻՆ ՄԷՋ» յօդուածէն բաժին մը, ուր անդրադարձ կայ դաստիարակութեան մէջ երաժշտութեան դերին.

«Երաժշտութեան ազդեցութիւնն ալ ահագին նշանակութիւն ունի բարոյական դաստիարակութեան գործին մէջ, վասն զի երաժշտութիւնը կը փափկացնէ, կ'ազնուացնէ մանուկ սիրտերը, անուշ եւ շիտակ հոգիներ կը պատրաստէ:

Եթէ դաստիարակութիւնը երաժիշտ է քիչ շատ, միջոց մը աւելի ունի իրապօրեւիտ համար մանուկները, որոնք երգի ու պարի խելք են: Անհրաժեշտ է օրուան գոնէ մէկ ժամը տալ

երաժշտութեան. բայց միայն երգեր սորվեցնելը բաւական չէ՛, այլ երբեմն աշակերտներու տարիքին ու երաժշտական հասկացողութեան յարմար կտորներ ալ առանձին նուազելու է, վասն զի միօրինակութիւնը ձանձրոյթ կը պատճառէ եւ փոփոխութիւն մտցնելով է որ հաճելի ու օգտակար կ'ըլլայ բան մը:

Մտաւոր դաստիարակութեան համար կարելի է սահմաններ որոշել եւ ընդունակութիւններու ու յարմարութիւններու համեմատ կարգադրութիւններ ու ընտրութիւններ ընել:

Ամենուն տրուած չէ՛ անշուշտ սուր ու կարող միտք. իմաստասէր մը, գիտուն մը կամ գրագետ մը ըլլալու ջերմ ցանկութեան հետ՝ նաեւ տաղանդ, բայց բարոյական դաստիարակութիւնը իր ամբողջական առումով պարտաւորիչ է եւ պէ՛տք է ըլլայ ամենուն համար ալ առ հասարակ:

Ամէն մանուկի մէջ, - ըլլայ՝ այն փարթաւ կամ անշուք տան գաւակ, - պէտք է սրտի մարդը պատրաստուի անպատճառ եւ դպրոցին է՛ն առաջին ու սրբազնագոյն կոչումը արդէն ատիկա է»:



Ռաֆֆի Սիկատյան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

- Միացեալ Էմիրութիւններու Շարիքա նահանգին մէջ ուսումնամարզական հաւաքի ընթացքին, Սուրիոյ ֆուտպոլի հաւաքականը, խումբի նորանշանակ մարզիչ Զուսամ Էլսայէտի գլխաւորութեամբ, բարեկամական հանդիպում մը ունեցաւ Վենեզուելայի հաւաքականին հետ եւ կրեց հերթական իր հինգերորդ պարտութիւնը:



- Անցեալ շաբթուան ընթացքին Զալեպի մէջ տեղի ունեցան Սուրիոյ պետական համալսարաններու միջեւ տղոց եւ աղջկանց պասքեթպոլի մըրցաշարքեր: Մեծ մրցակցութենէ ետք, Զալեպի գոյգ խումբերը տիրացան ախոյեանութեան:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՔԱՅԱՐԻ ՄԵՋ ԲԱՅՈՒՄՑ ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄԵՑԱԼ ԶԱՄԱՆԱՐՅԱՅԻՆ 2022-Ի ՖՈՒՊՈՒԼԻ ՄԱՐԶԱՆԱԿՆԵՐԸ

Աւելի քան 60 հազար ժողովուրդի ներկայութեան Քաթարի մայրաքաղաք Տաուհայի մէջ բացուած յայտարարուեցան 2022-ի համաշխարհային ֆուտպոլի մարզախաղերը: Մարզախաղերու պատմութեան մէջ այս առաջին անգամն է, որ տոյն մրցաշարքը տեղի կ'ունենայ Միջին Արեւելքի եւ յատկապէս արաբական երկրի մը մէջ: Բացման արարողութեան մաս կազմեցին միջազգային նշանաւոր երգիչներ. բարի գալուստի յատուկ արարողութիւն մը տեղի ունեցաւ մասնակից 32 երկիրներուն, ապա ներկայացուեցաւ 2022-ի մարզախաղերուն նշանակը: Ներկայացուեցան նաեւ նախկին մրցաշարքերու երգերը իրենց յատուկ նշանակներով: Քաթարի համաշխարհային խաղերը տեղի պիտի ունենան նորակառոյց ութը մարզադաշտերու վրայ, որոնք պատրաստուեցան արդիական միջոցներով՝ պահելով ներքին շերտութիւնը, նկատի ունենալով շերտաստիճանի բարձրութիւնը: Բացման արարողութենէն ետք տեղի ունեցաւ հիւրընկալ Քաթարի եւ Էքուատորի միջեւ 2022-ի առաջին հանդիպումը, որ աւարտեցաւ Քաթարի պարտութեամբ՝ 2 - 0 արդիւնքով:



ԱՆԳՆԻԱՆ ԶՍԿԱՅ ԱՐԴԻՆՔՈՎ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵՑ ԻՐԱՆԸ

Համաշխարհային խաղերու երկրորդ օրուան մրցումներուն, Անգլիոյ հաւաքականը 6 - 2 արդիւնքով պարտութեան մատնեց Իրանի կազմը: Հանդիպումի 20-րդ վայրկեանին, Իրանի հաւաքականը կրեց ծանր հարուած մը, երբ խումբի դարպասապահը վիրաւոր դուրս եկաւ դաշտէն, ինչ որ ազդեց խաղացողներուն հոգեկանին վրայ:



35-րդ վայրկեանին, Անգլիոյ խաղացող Պելլիկիամ կատարեց կոլերուն բացումը, որմէ ութը վայրկեան ետք, Պուլյաքո Սաքան կրկնապատկեց արդիւնքը: Նախքան կիսախաղը, Ռահիմ Հաթերլինկ նշանակեց երրորդ հարուածը: Երկրորդ կիսախաղը ընթացաւ նոյն կերպով. Անգլիան իշխեց խաղարկութեան եւ դարձեալ երեք առիթներով ցնցեց իրանի դարպասը: Իրանի գոյգ կոլերը նշանակեց Մըհտի Թարեմին՝ 65-րդ եւ 90-րդ վայրկեաններուն: Հոլանտան նաեւ 2 - 0 արդիւնքով կրցաւ պարտութեան մատնել Սենեկալին, որմէ կը բացակայէր լաւագոյն խաղացող Սատիօ Մանէն: Հոլանտայի գոյգ կոլերը նշանակեցին Քոտի Ճաքթոն եւ Տալի Բլասսենը՝ 84-րդ եւ 90-րդ վայրկեաններուն:

ԽԱԶՐԱՌ (ՄԽ 416)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1						■						
2								■				
3		■		■		■					■	
4			■		■			■				
5												
6					■	■					■	
7	■						■					
8		■									■	
9							■					
10					■	■					■	
11			■									
12										■		

Հորիզոնական

- Արցախեան ազատամարտիկ: Սուրճի փոքր գաւաթ:
- Հասկնալի: Տապալի:
- Առարկայ:
- Տառի մը անունը: Ստուար: Մատակ ձի:
- Առաջին պտուղ՝ բերք: Ձայնանիշ:
- 1992-1996-ին ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղարին մականունը: Յարձակող ամբոխ:
- Փոքր մանգաղի կոթ: Ձայնանիշ:
- Հակառակ՝ խաղաղարար:
- Անարդար: Արփի:
- Հակառակ՝ մեքենայի կլոր ձող: Սնտուկ:
- Հակառակ՝ տառի մը անունը: Միւռնել: Ասպար:
- Գգուանք: Հակառակ՝ առարկայ:

Ուղղահայեաց

- Հայ Առաքելական եկեղեցւոյ տօնելի 12 համաքրիստոնեական վարդապետներէն՝ Սուրբ Աղեքսանդրիացի, ծնած 375-ին, որ Նեստորի դէմ պայքարած է ուղղափառ դաւանանքի համար: Կատակ:
- Տարի: Չեփիւռ: Կոճակի օղակ:
- Եգիպտական դից: Ծուլանալ:
- Դե՛հ: Հայ առակագիր:
- Հեռու, օտար: Հակառակ՝ տարածքի միաւոր: Տառի մը անունը:
- Իրերայաջորդ տառեր: Դաւաճանութիւն, նենգութիւն: Էական բայ:
- Սէր արտայայտող տաղ: Խորք:
- Շրջագիծ: Շարուածք:
- Իգական անուն: Ծածկել, պահել:
- Երկրորդական կին: Թոյլ, մեղք:
- Տարածքի միաւոր: Նաեւ, եւս: Առարկայ:
- Կտակարար: Լեւոն Շանթի ստեղծագործութիւններէն. «..... Մարդը»:

ԽԱԶՐԱՌ (ՄԽ 415)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Լ	Ե	Ն	Ս	Ի	Մ	Ա	Մ	Ս	Ն	Ք	Օ
2	Ա	Կ	Ն	Ա	Վ	Ք	Մ	Մ	Մ	Ա	Ն	
3	Լ	Ա	Կ	Ի	Ն	Ք		Ք		Ո		
4	Ք	Մ	Ա	Ի	Վ	Ք		Ի	Գ	Փ	Ա	
5	Ա	Ո		Ա	Ի	Վ	Ք	Ն	Ո	Լ	Կ	
6	Լ	Ա	Ո	Ի	Ն	Ք		Ն	Ն	Ք		
7	Ս	Ո					Մ	Ի		Գ	Ա	
8	Գ	Կ					Մ	Ք	Գ	Վ	Ե	Ս
9	Ք	Ի	Ա	Ս			Ա	Ս	Ն	Ն		
10	Ո	Ո	Մ		Ա	Գ	Վ		Գ	Ա		
11	Լ	Ա	Վ		Ա	Ն	Գ		Ն			
12	Կ	Ա	Ք	Վ	Ա	Ք			Վ	Ա	Կ	

ԼՈՒՐԵՐ



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ...

Սկիզբ՝ էջ 1

րականներ, ինչպես նաև Ս. Պատարագ էն քաղուած հատուածներ, որոնց աւարտին Սրբազան Յայրը իր հայրական յորդորներն ու պատգամը ուղղեց աշակերտութեան:

Նոյն օրը յետմիջօրէին տեղի ունեցաւ երեկոյեան ժամերգութիւն, ապա մատուցուեց պատրաստութեան համար ծիսականօրէն կատարուող աղի օրհնութիւն: Սրբազան Յայրը այս անգամ դիմաւորուեցաւ մեծաթիւ հաւատացեալներու կողմէ:

Ժամերգութեան աւարտին, հայրապետական նուիրակը իր խօսքին մէջ անդրադարձաւ Կիրակնամուտի ժամերգութեան իմաստին եւ յատկապէս ճշմարիտ լոյսին, յարութեամբ մեզի տրուած աստուածային կեանքի յաւիտենականութեան, գօրութեան, ուրախութեան, երջանկութեան, ճշմարտութեան եւ հրաւիրեց ժողովուրդը, որպէս Զրիստոսի Յարութեան գօրութիւնը իր մէջ կրող հաւատացեալներ, իբրեւ երկնքի քաղաքացիներ, լոյսի եւ ցերեկուան որդիներ՝ նոյն հաւատքով, նոյն եռանդով եւ նոյն նախանձախնդրութեամբ ապրելու, պայքարելու եւ գործելու, միշտ կապուած մնալով եկեղեցւոյ ուսուցումներուն, վարդապետութեան եւ մեր ազգային, եկեղեցական, հոգեւոր եւ մշակութային արժէքներուն:

Շաբաթ երեկոյեան, հայրապետական նուիրակը շքախումբով այցելեց Լաթաքիոյ մէջ գործող ԶԲԸՄ-ի եւ ՍՕ Խաչի երկու ակումբները: Շքախումբին մաս կը կազմէին Յոգեշնորհ Ս. Մանուկ Վրո. Պարիխանեան, Արծաւնապատի Ս. Չարեհ Բիւլ. Շաքարեան, Ազգ. Վարչութեան ներկայացուցիչ եւ Ազգ. Երեսփոխանական Ժողովի ներկայացուցիչներ, որոնք դիմաւորուեցան Յայրական Բարեգործական Ընդհանուր Միութեան Լաթաքիոյ մասնաճիւղի վարչութեան ատենապետին, կազմին եւ ակումբէն ներս գործող անդամներուն կողմէ: Տեղի ունեցաւ աղի ու հացի օրհնութիւն: Կեդրոնի մուտքին, միութեան փողերախումբը Սուրբիոյ եւ Յայաստանի քայլերգներով դիմաւորեց Յայրապետական Նուիրակը:

Բացման խօսքով հանդէս եկաւ Յայրական Բարեգործական Ընդհանուր Միութեան Լաթաքիոյ մասնաճիւղի վարչութեան ատենապետ Բժշկ. Նիկոլ Մատանի, որ ամփոփ կէտերու մէջ ներկայացուց միութեան աշխատանքներն ու ծառայութիւնները: Այնուհետեւ, ներկայացուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը:

Աւարտին, հայրապետական նուիրակը իր սրտի խօսքը ուղղեց Սրբազան Յայրը բարձր գնահատեց միութեան աշխատանքները, պատասխանատուներն ու միութենականները եւ յատկապէս գեղարուեստական յայտագիրը ծաղկեցնողները, յիշեցնելով, որ այնքան ատեն որ մեր արժէքներուն եւ ասանդութիւններուն կապուած գիտակից եւ նախանձախնդիր մշակներ ունինք, որոնք պատասխանատուութեան

ոգիով կը պահեն, կը սորվեցնեն եւ կը փոխանցեն զանոնք յաջորդ սերունդներուն, վախճալու չենք, որովհետեւ անպայման կը յաջողինք ու կը յաղթանակենք:

Այնուհետեւ հայրապետական նուիրակը այցելեց Սուրիահայ Օգնութեան Խաչի Լաթաքիոյ մասնաճիւղի կեդրոն, ուր կը գործեն Սուրիոյ Երիտասարդական Միութեան գրասենեակը, Պատանեկան Միութիւնը, Յայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, Յամազգային Յայ Կրթական եւ Մշակութային Միութիւնը եւ Սուրիահայ Օգնութեան Խաչը: Սրբազան Յայրը դիմաւորուեցաւ ԶՄԸՄ-ի փողերախումբի եւ վերոյիշեալ բոլոր միութիւններու Լաթաքիոյ մասնաճիւղերու անդամներուն կողմէ: Կեդրոնի պատասխանատու, ԶՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութեան անդամ Յարութիւն Գաբրիէլեան բարի գալուստ մաղթեց հայրապետական նուիրակին եւ անդրադառնալով Լաթաքիոյ մէջ գործող միութիւններու աշխատանքներուն, շեշտեց, որ բոլորս որպէս տիպար հայորդիներ մեր եկեղեցւոյ եւ ազգի արժէքներուն եւ սկզբունքներուն հանդէպ ամբողջական հաւատարմութեամբ կ'ապրինք եւ կը գործենք:

Ներկայացուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը: «Կիլիկիա» մաղթերգի երգեցողութենէն ետք հրաւիրուեցաւ Սրբազան Յայրը, որ իր գնահատանքի խօսքը ուղղեց բոլոր միութիւններու պատասխանատուներուն եւ անդամ-անդամուհիներուն, որոնցմէ իւրաքանչիւրը իր պատասխանատուութեան գիտակցութեան մէջ իրեն վստահուած ծառայութիւնը ի գործ դնելու հրաւիրուած է եւ այս մէկը բոլորեւ կը պահանջէ ամբողջական նուիրում, գոհողութիւն եւ անձուէր ծառայութիւն:

Նկատի ունենալով տիրող դժուար պայմանները եւ մարտահրաւիրները, Սրբազան Յայրը նոյն միասնականութեան ոգիով շարունակելու հրաւիրեց լաթաքիահայութիւնը, որպէսզի կարողանան պահել գաղութին մէջ գործող մէկ դպրոցը, մէկ եկեղեցին, իր երկու ակումբներով եւ բոլոր միութիւններով:

Աւարտին, Մակար Սրբազան իր պատուիրակութեամբ հրաւիրուեցաւ ՍՕ Խաչի գրասենեակ, ուր մտերմիկ հանդիպում մը ունեցաւ վարչութեան անդամներուն հետ:

Կիրակի, 20 Նոյեմբեր 2022-ի առաւօտուն, Լաթաքիոյ մէջ աննախընթաց ցնծութեամբ յիշատակուեցաւ Աստուածամօր Տաճար Ընծայման եւ Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ անուանակոչութեան տօնը, Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկե-

ղեցւոյ մէջ, հոծ հաւատացեալներու ներկայութեան:

Այս տարի տօնը սփոփիչ եւ գօտեպնդիչ էր լաթաքիահայութեան համար: Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցեց Բերիոյ Յայրը Թեմի Յայրապետական Նուիրակ Գերաշնորհ Ս. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան: Ս. Սեդանին կը սպասարկէին Լաթա-



քիոյ եւ Շովպինեայ շրջանի հոգեւոր հովիւ Արծաւնապատի Ս. Վազգէն Բիւլ. Զեօշկերեան եւ Արծաւնապատի Ս. Չարեհ Բիւլ. Շաքարեան: Եկեղեցւոյ դօղանշներուն ներքեւ եւ «Յրաշափառ» շարականի երգեցողութեամբ մուտք գործեց պատարագիչ Սրբազան Յայրը: Ան իր քարոզին մէջ անդրադարձաւ Աստուածամօր տաճար ընծայման, ապա անոր Եղիսաբէթի այցելութեան:

«Երանի մենք ալ իրարու հանդիպման ու այցելութեան ժամանակ, ինչպէս Աստուածամօր ողջոյնը, օրհնութիւնը եւ բարիքը Եղիսաբէթին եւ անոր շրջապատողներուն, մեր ներկայութեամբ եւ մեր ողջոյնով, մեր վարքով ու յարաբերութեամբ՝ Զրիստոսի եւ Սուրբ Յոգիին ներկայութիւնը, գօրութիւնը, օրհնութիւնն ու բարիքները փոխանցողները ըլլանք, որպէսզի մեր սրտերն ու հոգիները ցնծան, ուրախանան եւ Ս. Յոգիի կրակով բոցավառ մղուին ինքնաճանաչումի, օրհնաբանութեան եւ աստուածայաշտութեան», ասելուց սըրբազան հայրը:

Զարոզի աւարտին, հայրապետական նուիրակը լաթաքիահայութեան փոխանցեց ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Յայրապետին շնորհաւորութիւնները, բարեմաղթութիւններն ու օրհնութիւնները, ինչպէս նաեւ յատուկ շնորհակալութիւն յայտնեց եւ աղօթք վերառաքեց Սուրիական Յայրենիքին եւ անոր վստմաշուք նախագահ տղթք. Պաշար ալ-Ասատին:

Պատարագէն ետք, հայրապետական նուիրակը թափօրով դուրս եկաւ եկեղեցիէն եւ շրջափակէն ներս անդակական մատաղօրհնէք կատարեց: Մատաղը պատրաստուած էր Լաթաքիոյ եկեղեցւոյ Տիկնաց Յանձ-

նախումբին կողմէ:

Փողերախումբը դարձեալ ազգային երգերով ոգեւորեց ժողովուրդի գաւակները, տօնական ջերմ մըթնոլորտ ստեղծելով:

Այնուհետեւ ի պատիւ Սրբազան Յօր տեղի ունեցաւ սիրոյ ճաշ՝ մասնակցութեամբ Լաթաքիոյ բոլոր միութիւններու ներկայացուցիչներուն, որոնք իրենց սրտի խօսքերուն ընդմէջէն արտայայտեցին իրենց հաւատարմութիւնն ու կապուածութիւնը հանդէպ Յայ Եկեղեցւոյ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Բերիոյ Յայրը Թեմին եւ հայրապետական նուիրակին:

Հաւաքական սիրոյ ճաշէն ետք, Սրբազան Յօր ձեռամբ եւ օրհնութեամբ տեղի ունեցաւ Թաղական Խորհուրդի վերանորոգուած դահլիճի բացումը, որ իրականացած էր քանի մը բարերարներու կիւթական աջակցութեամբ եւ անձնական ճիգերով:

Առ ի գնահատանք եւ երախտագիտութիւն Լաթաքիոյ շրջանէն ներս եւ մասնաւոր հայկական գաղութին մէջ իր մատուցած բազմակողմանի եւ հսկայածաւալ օգուտին, բարերարութեան եւ ծառայութեան, դահլիճը կոչուեցաւ անցեալի Թաղական Խորհուրդի ատենապետ եւ պետական յայտնի գործիչ հանգուցեալ Պօղոս Ղազարեանի անունով: Բացման հանդիսութեան Սրբազան Յօր կողքին ներկայ էր նաեւ հանգուցեալի այրին՝ Տիկ. Մարօ Ղազարեան-Ղազարեան:

Երկուշաբթի, 21 Նոյեմբեր 2022-ի առաւօտուն, հայրապետական նուիրակը իր շքախումբով Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ ուխտի օրուան առիթով տուած իր այցելութիւնը եզրափակեց այցելելով Լաթաքիոյ Ազգ. Նահատակաց վարժարան, ուր ջերմապէս դիմաւորուեցաւ վարժարանի Յոգաբարձութեան, տնօրէնուհի Յուրի Տէիրմէնճեան-Գարամարտեանի եւ աշակերտներուն կողմէ: Աշակերտները ներկայացուցին արտասանութիւններ եւ ազգային երգեր, արտայայտելով իրենց սերն ու կապուածութիւնը հայրը լեզուին եւ հայրենիքին:

Յայրապետական նուիրակը շնորհակալութիւն յայտնեց վարժարանի Յոգաբարձութեան, ուսուցչական կազմին եւ տնօրէնուհիին, որոնք նուիրումով կը ծառայեն հայ դպրոցին: Ան գնահատեց նաեւ իւրաքանչիւր ծնողը, որ իր գաւակը դպրոցին վստահելով գիտէ գնահատել Լաթաքիոյ մէջ գործող մարդակերտումի եւ հայակերտումի դարբնը՝ Ազգ. Նահատակաց վարժարանը: Ապա, ան այցելեց մանկապարտէզի բաժին, որմէ ետք յատուկ հանդիպում ունեցաւ վարժարանի Յոգաբարձութեան, Տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին հետ:

Յայրապետական նուիրակին հովուական այցելութիւնը լաթաքիահայութեան կեանքէն ներս անօրինակ ուրախութիւն եւ սփոփարար միսթարանք ստեղծեց: Անոր խրախուսիչ պատգամները ասելով գօտեպնդեցին լաթաքիահայերու սըրտերը՝ յոյսով, յանձնառութեամբ եւ պատասխանատուութեամբ գործելու, ծառայելու եւ ապրելու: